

Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutian» (education) weekly «Кртытиан» (образование) еженедельник 07.12.2022թ. չորեքշաբթի թիվ 51 (1076)

Գյուևրի

Մեծարում

1915-ից 3 տարի անց՝ 1918-ին, Սարդարպատի ճակատամարտի պատմական հաղթանակով հիմնադրվեց **Հայաստանի Հանրապետությունը**: 1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժից 3 տարի անց՝ 1991թ. սեպտեմբերի 21-ի հանրաքվեի փայլուն արդյունքով, վերստին վերականգնվեց հայոց **անկախ պետությունը**... Մեզ միշտ սեղմել են... եւ ժամանակների մեջ այնքան, որ դարձել ենք **զսպանակ**: 1988-ի փետրվարից զսպանակն այլևս սեղմվել չի կամենում. այն այսուհետեւ միայն **ընդարձակվելու է**... եւ ժամանակների մեջ այնքան, մինչեւ վերստին ստանա իր **նախնական** տեսքը...



«Աղետի գոտի» հասկացությունը վաղուց փոխարինվել է «գարգացման գոտի» հասկացությամբ... Ի հեճուկս երեւացող ու աներեւոյթ բազմադեմ խարդավանքների, աղետների ու պատերազմների՝ Հայաստանը **վերածնվում է**... Փլատակների միջից ելած նորածիններն այսօր արդեն կերտում են վաղվա **Մեծ Հայաստանը**:

Երկրաշարժից առաջ **Գյուևրին** Հայաստանի երկրորդ քաղաքն էր. արդյունաբերական, գիտական, կրթամշակութային խոշոր կենտրոն... Բայց ամենից առաջ Գյուևրին Գյուևրին էր պարզապէս, որ ուներ իր ուրույն **դիմագիծը**, իր ինքնատիպ **քաղաքացին**, իր համով-հոտով **միջավայրը**... Հոռետեսները կարծում են, որ Գյուևրին այլևս հնարավոր չէ վերականգնել այնպէս, ինչպէս որ կար... Եիշտ է, նոր կառույցները ներկայի գյուևրեցիների համար կդառնան (դարձել են) տուն, դպրոց, մշակույթի օջախ կամ սպասարկող որեւէ հիմնարկություն, տարիների հետ կավելանա նաեւ բնակչության թիվը, բայց քաղաքն այլևս չի վերագտնի իր **դէմքը**, միայն իրեն բնորոշ միջավայրը, միայն իրեն հատուկ **բարք ու վարքը**... Փորձենք լինել լավատես եւ հաավատալ, որ վերընծնողված Գյուևրին, ինչպէս նաեւ **Վանաձորը**, **Սպիտակը**, տարիների հետ կդառնան ավելի գեղեցիկ, քան էին երկրաշարժից առաջ, կվերականգնեն միայն իրենց հատուկ միջավայրը, դիմագիծը...

Հայաստանը շատ քաղաքներ ու մայրաքաղաքներ է ունեցել: Ոչ պատահականորեն բնութագրվել է որպէս **դեգերող մայրաքաղաքների երկիր**: Շատերն այդ հանգամանքը դիտել են որպէս պատերազմների, ավարառությունների հետեւանք, երբեմն էլ բացատրել իբրեւ հայոց արքաների պարզ փառասիրություն. յուրաքանչյուր թագավոր ձգտում էր կառուցել իր մայրաքաղաքը: Փորձենք մեր թագակիր եւ գահակալ նախնիներին պատկերացնել ավելի իմաստուն. գուցե **ո՞րչ Հայաստանը** ծաղկուն եւ բարգավաճ դարձնելու հեռահար միտողն էր նոր մայրաքաղաք հիմնելու շարժառիթը: Չէ՞ որ Հայաստանը **քաղաք-պետություն չէր**, այլ հիմնավորց հզոր մի երկիր՝ իր բնօրրան **Հայկական Լեռնաշխարհում**՝ ինքնատիպ քաղաքակրթությամբ **մշտապէս** զարգացող: Ամեն նոր մայրաքաղաք դառնում էր մի նոր **համագային զարթոնքի** սկիզբ. եւ ճարտարապետությունը, իր քաղաքաշինական եւ արվեստի դրսևորումներով, եւ մշակույթի մյուս բոլոր ոլորտները հարստանում էին **նոր դպրոցներով եւ ուղղություններով**...

Արդ, ի՞նչն է մեզ ստիպում առանց այդ էլ զսպանակի պէս փոքրացած մեր հայրենիքում շարունակ **կենտրոնանալ** մի բնակավայրում կամ նրա շուրջ. թեկուզ եւ այն լինի ամենայն հայոց չքնադագույն մայրաքաղաքը (թեւէ այն վաղուց այլևս **վարդագույն** գեղեցկուհին չէ, այլ՝ ժամանակակից **եվրոպական** մի քաղաք, որ ժամանակի հետ իր դիմագծի **ազգային** երանգները փոխարինում է «**համամարդկայինով**»)... ժամանակը չէ՞ մտածելու ընդարձակվելու, **տարածվելու** մասին... Մանավանդ, որ պետականորեն հաստատված է երկրի համաչափ զարգացման հայեցակարգ: Չհամարձակվե՞նք, արդյոք, մայրաքաղաքը, եթէ ոչ ամբողջապէս, գոնէ մասնակիորեն տեղափոխել, ասենք՝ **Գյուևրի, Գորիս, Վանաձոր**... Ի՞նչ ասել է մասնակիորեն. այս դեպքում նկատի ունենք որոշ գերատեսչություններ մայրաքաղաքից երկրի մյուս քաղաքներ տեղափոխելը: Ասենք, Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը՝ Գյուևրի, Պաշտպանության նախարարությունը (թերեւէ՝ ՀՀ ՁՈՒ գլխավոր շտաբը)՝ Գորիս, Էկոնոմիկայի նախարարությունը՝ Իջեւան եւ այլն: Երեւանը կբեռնաթափվի, **սահմանամերձ** շրջանները կամրանան, կբարգավաճեն... Հավատացե՛ք, սա ռոմանտիկ կամ խենթ գաղափար չէ, այլ ազգային անվտանգության տեսակետից կամ հոգեւոր մի նոր վերածնունդ կազմակերպելու առումով՝ հեռահար խելամիտ մի ծրագրի միտված՝ ուշադրության արժանի առաջարկ: Մանավանդ, որ մենք քաղաք-պետություն չենք, եւ անկախությունն էլ լոկ հռչակագիր չէ: Թեւէ օրախնդիր հոգսերով ծանրաբեռ, այնուամենայնիվ, խիզախենք մտածել վաղվա մասին:

Գ.Ս.

«Դուք մեր հպարտությունն եք...»

Վլբերտ Ազարյանի անվան մարմնամարզության օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մարզադպրոցի բակում բացվել է լեգենդար մարմնամարզիկ, Օլիմպիական խաղերի եռակի չեմպիոն, աշխարհի քառակի եւ Եվրոպայի կրկնակի չեմպիոն, «Օղակների արքա» **Վլբերտ Ազարյանի** կիսանդրին:

Միջոցառմանը մասնակցել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Վահրամ Դումանյանը**, ՀԱՕԿ նախագահ **Գագիկ Ծառուկյանը**, նախարարի տեղակալ **Կարեն Գիլոյանը**, ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ **Սիսակ Գաբրիելյանը**, ներկայացուցիչներ Երեւանի քաղաքապետարանից, անվանի մարզիկներ եւ այլ պաշտոնյաներ:

շարունակությունը՝ էջ 3

Տեսչություն

Քննարկվել է 2023 թվականի գործունեության ծրագիրը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Վահրամ Դումանյանի** մասնակցությամբ տեղի է ունեցել աշխատանքային հանդիպում Կրթության տեսչական մարմնի 2023 թվականի գործունեության եւ ստուգումների տարեկան ծրագրերի նախագծերի քննարկման նպատակով:

Քննարկմանը մասնակցել են ՀՀ վարչապետի աշխատակազմի Տեսչական մարմնի մեջ աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի պարտականությունները կատարող **Արմեն Դանիելյանը**, Կրթության տեսչական մարմնի ղեկավարին փոխարինող **Ռաիսա Գալստյանը**, Կրթության տեսչական մարմնի կառավարման խորհրդի անդամներ եւ տեսչական մարմնի այլ ներկայացուցիչներ:

շարունակությունը՝ էջ 2

Նախագիծ

Հավելավճար ստանալու հնարավորություն

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել «*Կրթության մասին*» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու նախագիծը, որով արտադպրոցական հաստատությունների մանկավարժական աշխատողները հնարավորություն կստանան իրենց նախաձեռնությամբ ատեստավորվելու եւ դրա արդյունքում ստանալու հավելավճար:

2021-2022 ուստարում երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներում եւ մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններում դասավանդել է **5099 ուսուցիչ (76.8 %-ը՝ կանայք)**, որոնց 42.6 %-ն ունեցել է միջին մասնագիտական կրթություն: Սպորտային կազմակերպություններում մարզումներն իրականացրել է 2104 մարզիչ-մանկավարժ (15.4 %-ը՝ կանայք):

Հարկ է նշել, որ առ այսօր որեւէ իրավական ակտով սահմանված չեն արտադպրոցական ուսուստատությունների մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկն ու նկարագիրը, մինչդեռ մանկավարժների ոչ միայն մասնագիտական պատրաստվածությամբ, այլեւ գործառնությունների հստակ սահմանմամբ է պայմանավորված, թէ ինչպիսի կարողունակություններով պետք է օժտված լինի անձը՝ կրթության կազմակերպման արդյունքում կարողունակ քաղաքացի ձեւավորելու համար:

շարունակությունը՝ էջ 2

Հավելավճար ստանալու հնարավորություն

սկիզբը՝ էջ 1

Արտադարձական հաստատությունների ֆինանսավորումը

Ներկայումս գործող ֆինանսավորման բանաձևերը հնարավորություն չի տալիս գործընթացը իրականացնելու նույն սկզբունքով, եւ այս ոլորտում չի ապահովվում տեղական, մարզային, պետական մարմինների, ինչպես նաեւ միջգերատեսչական համագործակցության բարելավումը, պետական բյուջեից ֆինանսավորվող ծրագրերի թափանցիկության իրագործումը: Արտադարձական հաստատությունների ֆինանսավորման համար անհրաժեշտ է կիրառել միասնական մոտեցում՝ հնարավորինս ստույգ հաշվարկել ֆինանսավորումը յուրաքանչյուր անհատական դեպքի համար:

Նախագծով առաջարկվող փոփոխություններով հնարավոր կլինի.

1) սահմանել հիմնական դրույթները, նպատակները, խնդիրներն ու զարգացման ուղիները, որոնք համընդհանուր են արտադարձական կրթության եւ դաստիարակության ոլորտում՝ նոր որակական նախադրյալներ ստեղծելու համար,

2) նպատակ մատուցվող ծառայությունների որակի եւ մատչելիության բարելավմանը, որի ապահովումը ենթադրում է՝

- ոլորտի կադրային համալրում, զարգացնող միջավայրի ստեղծում, ինքնակրթություն, փորձի փոխանակում: Մանկավարժական գործունեությունը մանկավարժից պահանջում է գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների անընդհատ զարգացում: Հայաստանում մանկավարժների, այդ թվում՝ արտադարձական ուսուցաստույթներում աշխատող մանկավարժների ցածր աշխատավարձը խոչընդոտում է մարդկային լավագույն կապիտալի, այդ թվում՝ արական սեռի մասնագետների մուտքը ոլորտ, վերջիններիս չի մղում մասնագիտական զարգացման: Այս խնդիրը լուծելու նպատակով պետք է մշակվի արդյունքի վրա հիմնված մանկավարժների կամավոր ատեստավորման կարգ, որը հնարավորություն կտա հավելավճարի տեսքով հասնելու աշխատավարձի բարելավման: Համաձայն ՀՀ կառավարության որոշման՝ արտադարձական հաստատություններում մանկավարժները կարող են դասավանդել շաբաթական 24 ժամ, որը համարժեք է 1 դրույթի: Ըստ այդմ արտադարձական ուսուցաստույթներին մանկավարժի մեկ դրույթի համար հաշվարկվում է 132 276 ՀՀ դրամ աշխատավարձ: Առաջարկվող նախագծի ընդունմամբ եւ համապատասխան կարգի գործարկմամբ արտադարձական ուսուցաստույթի մանկավարժական աշխատողները կարող են իրենց նախաձեռնությամբ մասնակցել գիտելիքների գնահատման գործընթացին եւ դրա արդյունքում ստանալ 30-50 % հավելավճար:

- ֆինանսատնտեսագիտական պայմաններ՝ պետության կողմից երաշխավորված ֆինանսավորում՝ նոր մեխանիզմների ներդրմամբ,

- ուսումնական գործընթացի եւ օրենսդրության կատարելագործում՝ կարգերի, ուսումնական պլանների, ծրագրերի մշակմամբ եւ լրամշակմամբ:

Քաղաքացիները եւ շահառու խմբերը մինչեւ դեկտեմբերի 16-ը կարող են նախագծերի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները ներկայացնել Իրավական ակտերի նախագծերի իրապարակման միասնական կայքում:

Հ. Հ.

Հայացք դեպի ապագա

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Վահրամ Դումանյանը ընդունել է Ռուսաստանի Դաշնության նախագահի՝ օտարերկրյա պետությունների հետ միջտարածաշրջանային եւ մշակութային կապերի վարչության պետ Իգոր Մասլովի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպմանը մասնակցել են ԿԳՄՍ նախարարի տեղակալներ Ժաննա Անդրեասյանը եւ Արթուր Մարտիրոսյանը, ՌԴ լուսավորության նախարարի տեղակալ Դենիս Գրիբովը, ՀՀ-ում ՌԴ արտակարգ եւ լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինը եւ այլք:

Հանդիպման ընթացքում քննարկվել են կրթության, գիտության եւ մշակույթի ոլորտներում հայ-ռուսական հարաբերությունների զարգացման հեռանկարները:

Ոլորտներով ՌԴ պատվիրակության այցը նախարար Վահրամ Դումանյանը նշել է, որ երկու երկրների միջպետական հարաբերություններում առանձնահատուկ տեղ է գրավում մշակույթի ոլորտում համագործակցությունը, ինչի մասին են վկայում երկու երկրներում շարունակաբար անցկացվող միջոցառումները, մասնավորապես՝ Հայաստանում հաջողությամբ անցկացված Ռուսաստանի հոգեւոր մշակույթի օրերը:

Անդրադառնալով կրթության ոլորտում համագործակցությանը՝ ԿԳՄՍ նախարարը նշել է, որ հայկական կողմը կարելի է Հայաստանում ռուսերենի զարգացման հարցը եւ պատրաստ է քննարկել նոր նախաձեռնություններ՝ ՀՀ օրենսդրության պահանջների շրջանակում: Այս համատեքստում կողմերը, մասնավորապես, կարելի է ռուսերենի դասավանդման արդյունավետության բարձրացման, կրթական ծրագրերի, դասագրքերի բարելավման, ինչպես նաեւ ռուսերենի ուսուցիչների մասնագիտական զարգացման եւ որակավորման բարձրացման հարցերը:

ՌԴ նախագահի՝ օտարերկրյա պետությունների հետ միջտարածաշրջանային եւ մշակութային կապերի վարչության պետ Իգոր Մասլովը իր հերթին նշել է, որ պատվիրակությունը Հայաստան է ժամանել՝ մասնակցելու սեպտեմբերի 2-ին անցկացվող «Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ գիտակրթական համագործակցության զարգացում. հայացք դեպի ապագա» կլոր սեղանին: Նա նշել է, որ միջոցառմանը կմասնակցեն Հայաստանի եւ Ռուսաստանի կրթության եւ գիտության ոլորտի ներկայացուցիչներ՝ վստահություն հայտնելով, որ համատեղ նախագծերի իրականացումը եւ գիտակրթական հաստատությունների միջեւ փորձի փոխանակման հնարավորությունն ուղղակիորեն կնպաստեն երկու երկրների միջեւ հարաբերությունների ամրապնդմանը:

Քննարկման ընթացքում քննարկվել են երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:



Քննարկվել է 2023 թվականի գործունեության ծրագիրը

սկիզբը՝ էջ 1

Կրթության տեսչական մարմնի ղեկավարին փոխարինող Ռաիսա Գալստյանը հակիրճ ներկայացրել է 2023 թվականին նախատեսվող աշխատանքները՝ նշելով, որ 2023 թվականին Կրթության տեսչական մարմինն ուսումնական հաստատություններում իրականացնելու է 140 ստուգում, որից 11-ը՝ նախարարության, 120-ը՝ հանրակրթական, 2-ը՝ նախնական մասնագիտական եւ 7-ը՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

Վահրամ Դումանյանը, կարելի էր ավելի տեսչական մարմնի աշխատանքը, ընդգծել է, որ հանրակրթության ոլորտում մասնագիտական դիտարկումները եւ որակի գնահատումը առաջնային խնդիր են: Նախարարի խոսքով՝ բոլոր ստուգումները վերջնարդյունքում պետք է նպաստեն հանրակրթության որակի բարելավմանը:

Վահրամ Դումանյանը նաեւ նշել է, որ ներկայումս առավել ռիսկային կարող է համարվել մասնագիտական կրթության ոլորտը. «ՀՀ տնտեսության զարգացման համար միջին մասնագիտական հաստատությունները շատ կարեւոր օղակ են: Անկասկած, կրթական բոլոր հաստատություններն էլ մշտապես պետք է պետության ուշադրության կենտրոնում լինեն, հարկ է ուսումնասիրել եւ վերծանել խնդիրները՝ մշակելով



համապատասխան լուծումներ»:

ԿԳՄՍ նախարարը Կրթության տեսչական մարմնի կառավարման խորհրդի անդամներին առաջարկել է ընդլայնել խորհրդի կազմը՝ ներառելով նաեւ համապատասխան ոլորտների համար պատասխանատու փոխնախարարներին, ինչն արդյունավետ կլինի առկա խնդիրներն առավել խորքային քննարկելու տեսանկյունից:

Կրթության տեսչական մարմինն իր առջեւ նպատակ է դրել աջակցել օրենսդրության պահանջների պահպանման ապահովմանը, կրթության որակի բարձրացմանը եւ կրթական ծրագրերի արդյունավետ իրականացմանը:

Նշենք, որ Կրթության տեսչական մարմնի՝ 2023 թվականի գործունեության եւ ստուգումների ծրագրերը, ինչպես նաեւ Կրթության տեսչական մարմնի որակի ստորաբաժանման 2023 թվականի գործունեության ծրագիրը կներկայացվեն խորհրդի հաստատմանը եւ սահմանված կարգով կիրառարկվեն:

Հանդիպման ընթացքում արծարծվել են նաեւ աշխատանքային մի շարք այլ հարցեր:

«Դուք մեր հպարտությունն եք...»

սկիզբը՝ էջ 1

«Օլիմպիական խաղերի բազմակի չեմպիոն, միջազգային ասպարեզում անվանի եւ հարգված մարզիկը՝ 93-ամյա Ալբերտ Ազարյանը, այսօր էլ մեր կողքին է՝ եռանդուն ու հպարտ,- փաստել է ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը եւ ընդգծել,- շատ քչերին է բախտ վիճակվել կենդանության օրոք ներկա գտնվել իր արձանի բացմանը: Դուք այդ իրավունքը վաստակել եք եւ արժանի եք այս մեծարանքին: Սաղթում եմ, որ դեռ երկար տարիներ՝ առավոտյան մարզման գալիս, հայացք նետեք Ձեր կիսանդրուն եւ հասկանաք, որ Դուք մեր հպարտությունն եք»:

Մարմնամարզության միջազգային ֆեդերացիայի հավաստագրման համաձայն, ինչպես հայտնի է, օղակների վրա Ալբերտ Ազարյանի կատարած վարժությունների համալիրը պաշտոնապես կոչվում է «Ազարյանական խաչ»: Այսօր էլ՝ հանրահայտ վարժությունը կատարելուց 66 տարի անց, աշխարհի բոլոր մարզական մեկնաբանները, սպորտային մարմնամարզության մասնագետներն ու սիրահարները որեւէ մարզիկի՝ օղակների վրա վարժություն կատարելիս վկայակոչում են «Ազարյանի խաչը»:

Կենդանի լեգենդ Ալբերտ Ազարյանի բրոնզաձուլ կիսանդրու հեղինակը քանդակագործ, Հայաստանի նկարիչների միության անդամ **Գերասիմ Շահվերդյանն** է: Ասում է կիսանդրին ստեղծելու առաջարկը ստացել էր վաղուց՝ 2013 թվականին, երբ անվանի մարմնամարզիկ Յրանտ Շահին-




յանի արձանն էր տեղադրվում:

«Ինձ համար այսօր շատ պատասխանատու օր է: Բացում ենք մի արձան, որը նվիրված է մեր լեգենդար մարմնամարզիկին: Արձանը ստեղծելիս Ազարյանին պատկերել եմ 27-28 տարեկանում, երբ նա արդեն օլիմպիական չեմպիոն էր: Ուզում էի՝ երիտասարդ լինի, որ սերունդները նրան այդպիսին հիշեն: Աշխատանքի ընթացքն այնքան էլ երկար չի տևել: Ազարյանը շատ համեստ անձնավորություն է. հավատացե՛ք՝ ընթացքում որեւէ նկատողություն չի արել, առանձնահատուկ ցանկություններ

չի հայտնել, թե ինչպիսին կուզեր տեսնել իր արձանը»,- ասում է քանդակագործը:

Լեգենդար Ալբերտ Ազարյանն էլ խոստովանում է իր համար սա կարելու եւ մշակողների իրադարձությունն էր. «Իհարկե, հավանել եմ արձանը: Իմ հոգում սա մեծ իրողություն է: Շնորհակալ եմ բոլոր այն մարդկանց, որոնք իրականացրել են այս նախածեռնությունը: Ես մշտապես զգացել եմ ձեր սերն ու հարգանքը»:

Հուշակոթողը տեղադրվել է ՀԱՕԿ նախագահ Գագիկ Ծառուկյանի եւ Երեւանի քաղաքապետարանի աջակցությամբ:



Օլիմպիական խաղերի եռակի, աշխարհի քառակի եւ Եվրոպայի կրկնակի չեմպիոն, 20-րդ դարի լավագույն հայ մարզիկ, Հայաստանի մարմնամարզության ֆեդերացիայի պատվավոր նախագահ Ալբերտ Ազարյանն 93 տարեկան է: Ծնվել է 1929 թվականին, Գանձակում՝ արհեստավորի ընտանիքում: 1939 թվականին ընտանիքը տեղափոխվել է Վանաձոր, իսկ 1947 թվականին՝ Երեւան: Նա ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ է (1954), ՀԽՍՀ վաստակավոր մարզիչ, ՀԽՍՀ ֆիզկուլտուրայի եւ սպորտի վաստակավոր գործիչ (1967):

Դասագիրք

Դրամաշնորհային մրցույթ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հայտարարում է դրամաշնորհային մրցույթ՝ **2-րդ, 5-րդ, 7-րդ եւ 10-րդ դասարանների** հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման նպատակով:

Դասագրքերի էջերը պետք է չգերազանցեն **2-րդ, 5-րդ եւ 7-րդ դասարաններում՝ 176 էջը (11 մամուլ)**, իսկ **10-րդ դասարանում՝ 192 էջը (12 մամուլ)**: Դասագիրքը պետք է լինի թղթային, ունենա օգտագործման մեթոդական ուղեցույց եւ բովանդակությունը լրացնող կամ հարստացնող այլ ուսումնական նյութեր, որոնք կարող են լինել էլեկտրոնային:

Մասնակիցները կարող են մրցույթին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում հայտը ներառում է նաեւ համատեղ գործունեության պայմանագիրը եւ համահեղինակների միջեւ կնքված պայմանագիր՝ հստակ սահմանելով համահեղինակների՝ տվյալ դասագրքի ստեղծման մտավոր սեփականության իրավունքի պայմանները:

Համատեղ գործունեության պայմանագրի կողմերից որեւէ մեկը չի կարող մրցույթին ներկայացնել առանձին հայտ: Այս պահանջը չպահպանելու դեպքում հայտերի բացման նիստում մերժվում են ինչպես համատեղ գործունեության կարգով, այնպես էլ առանձին ներկայացված հայտերը:

Փորձաքննությունն անցած եւ հաղթող ճանաչված յուրաքանչյուր դասագրքի համար (բայց ոչ ավելի, քան յուրաքանչյուր չափաբաժնից 2 դասագիրք) տրվում է 6.300.000 (վեց միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ:

Հանրակրթական առարկաների դասագրքերին ներկայացվող ընդհանրական պահանջներն են՝

- դասագիրքը պետք է համապատասխանի հանրակրթության պետական չափորոշիչ, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված տվյալ առարկայի չափորոշիչի ու ծրագրի

պահանջներին եւ ներկայացնի առարկայի կամ դրա՝ համապատասխան դասարանի համար նախատեսված մասի (եթե դասագիրքը կազմված է մեկից ավելի իրար շարունակող մասերից) հիմնական բովանդակությունը,

- դասագիրքը պետք է ներկայացնի միայն ստույգ, գիտականորեն հաստատված եւ ճշգրիտ տեղեկատվություն, վարկածների վերաբերյալ տեղեկատվության ընդգրկման պարագայում հստակ նշում պարունակի այդ մասին, օգտագործվեն միայն գիտականորեն շրջանառվող վարկածներ,

- դասագրքում պետք է սպահովված լինեն պատշաճ հղումները (այդ թվում՝ էլեկտրոնային հասցեների հղումներ) օգտագործված բոլոր նյութերին եւ աղբյուրներին,

- դասագիրքը պետք է հնարավորություն ընձեռի բազմակողմանիորեն ծանոթանալու ներկայացվող նյութին կամ թեմային եւ նպաստի սովորողի մոտ դրա վերաբերյալ սեփական դիրքորոշման ու կարծիքի ձևավորմանը,

- դասագիրքը պետք է լինի մատչելի՝ համապատասխանելով տվյալ դասարանի սովորողի լեզվամտածողությանը, ինչպես նաեւ տեսողության խնդիրներ ունեցող երեխաների առանձնահատկություններին՝ խուսափելով մասնագիտական եւ գիտական եզրույթների անհարկի գործածումից, երկարաշունչ նախադասություններից՝ կիրառելով պարզ կառուցվածքով եւ հասկանալի բովանդակությամբ նախադասություններ, ներառի պարզ օրինակներ, բազմաբնույթ վարժություններ,

- դասագրքում պետք է օգտագործվեն տեղեկատվության փոխանցման տարբեր եղանակներ՝ տեքստային, պատկերային, գրաֆիկական, թվային եւ այլ՝ փոխընդհանուր եւ համադրման սկզբունքով՝ խուսափելով կրկնություններից,

- դասագրքի կառուցվածքը պետք է համապատասխանի ներքոգրյալ պահանջներին. գլուխների եւ դասերի, պարագրաֆների եւ կառուցվածքային այլ բնութագրիչներ

րի դասավորում, ներքին ամբողջականություն, հստակություն, տրամաբանական հաջորդականություն, եզրակացությունների հակիրճություն, պարզություն, նկարագրողականների, ճշգրիտ եւ բազմազան հարցերի, պայմանների ու առաջադրանքների այնպիսի կառուցվածք, որը սովորողներից պահանջում է կատարել մտավոր գործողություններ, նշումներ, ուրվագծեր, գծանկարներ, հաշվարկներ, գործնական աշխատանքներ, փորձեր եւ այլն:

Դասագրքերի ստեղծման մրցույթի պարտադիր բաղադրիչ է մրցույթին ներկայացված դասագրքերի փորձաքննությունը, որն իրականացվում է 2 փուլով՝ համապատասխանության փուլ եւ բովանդակային գնահատման փուլ:

Մրցույթին մասնակցության հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային **armeps (www.armeps.am)** համակարգի միջոցով (բացառությամբ դասագրքի օֆսեթ եղանակով տպագրված ազդեցիկ մեծուշի ու դրա էլեկտրոնային տարբերակի, որը ներկայացվում է առձեռն՝ հայտը ներկայացնելու հաջորդ օրը) **մինչեւ 2023 թվականի 2023 թվականի մարտի 31-ը՝ ժամը 15:00-ն:**

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարելի է դիմել **(010) 59-96-17** հեռախոսահամարով:

Հայտեր կարող են ներկայացնել **armeps** համակարգում գրանցված ֆիզիկական կամ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպությունները (այսուհետ՝ նաեւ մասնակից):

Համակարգում որպես մասնակից գրանցվելու նպատակով անձը մուտք է գործում **www.armeps.am** հասցեով գործող կայք եւ լրացնում համապատասխան պահանջվող տեղեկատվությունը, որից հետո գրանցումը հաստատելու նպատակով էլեկտրոնային փոստի միջոցով ստացված թվի եւ (կամ) տառերի կոմբինացիան մուտքագրում է համակարգ: Նշված տեղեկատվությունը ճիշտ մուտքագրելուց հետո ան-



ձը համարվում է համակարգում գրանցված մասնակից, ինչի մասին ավտոմատ եղանակով տեսնում է ծանուցում: Մասնակցի գրանցումն ավտոմատ եղանակով համարվում է չեղյալ, եթե համակարգում գրանցվելու օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում վերջինս մուտք չի գործում համակարգ կամ մուտք է գործում, սակայն համակարգ չի մուտքագրում տեղեկատվությունը: Այս պարագայում իրականացվում է գրանցման նոր գործընթաց:

Հավելենք, որ ԿԳՄՍ նախարարությունը հայտարարել է նաեւ մրցույթ՝ Հանրակրթության պետական չափորոշիչի պահանջներին դասագրքերի համապատասխանությունը գնահատող առարկայական համաձայնագրի ձևավորման նպատակով:

Հանձնաժողովների գործունեության նպատակն է՝ իրականացնել **2-րդ, 5-րդ, 7-րդ եւ 10-րդ դասարանների** դասագրքերի փորձաքննություն:

Հանձնաժողովներից յուրաքանչյուրում ընդգրկվելու են տվյալ առարկայի **3-5** մասնագետ, մանկավարժ-մեթոդիստ, մանկավարժ-հոգեբան, հայոց լեզվի մասնագետ, նկարիչ-ծեւավորող, բժիշկ-հիգիենիստ: Յուրաքանչյուր մասնագիտական ուղղությունից ընտրվում է մինչեւ **5** թեկնածու՝ յուրաքանչյուր առարկայի համար:

Հանրակրթության պետական նոր չափորոշիչով պայմանավորված ստեղծվող դասագրքերի ցանկը իրապարակված է ԿԳՄՍ պաշտոնական կայքում:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

Գրականագիտական

Բաժնու «Դավիթ Բեկ» պատմավեպը


Ա. 2022 թվականին լրացավ Դավիթ Բեկի սխրագործության 300 տարին: Այս երեք հարյուր տարիների ընթացքում մենք՝ որպես հայ ժողովուրդ, մեր ազգային ծրագրերի իրականացման ճանապարհին պարտական ենք նաև նրան: Այդ բարձր գիտակցությունը ժամանակին ոգեշնչեց Բաժնու գրելու իր «Դավիթ Բեկ» պատմավեպը:

Բաժնին ռոմանտիկ էր, այլ կերպ՝ գաղափարապաշտ: Ազգային վերակայացման գաղափարաբանության նպատակով նա ստեղծեց սերունդներին գործնական օրինակ տվող հերոսներ: Դա թե՛ պարսկահայության եւ կովկասահայության կյանքը նկարագրելիս («Սալբի», «Հարեն», «Ոսկի աքաղաղ»), թե՛ ծրագրային վեպերում («Ջալալեդդին», «Խենթը», «Կայծեր») եւ թե՛ պատմավեպերում («Դավիթ Բեկ», «Պարոյր Հայկազն», «Սամվել»): Եվ, իրոք, Բաժնու այս վեպերից ծնվեցին ոչ միայն ազգային հերոսներ, այլև ազգային կուսակցություններ ու գաղափարախոսություններ:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը ազգային վերականգնումի մոր հույսեր էր ներշնչել հայ ժողովրդին: Բաժնին այդ հույսերի արտահայտիչն էր: Դավիթ Բեկի կերպարը մարմնավորելու համար վիպասանը պատմական հիմքեր էր որոնում, իսկ միակ հիմքը Մխիթարյան միաբան Դուկաս Սեբաստացու «Դավիթ Բեկը պատմութիւն մարտից Դավիթ Բեկի» աշխատությունն էր: Սեբաստացին իր հերթին օգտվել է Դավիթ Բեկի հետ ազատագրական սխրագործ իրականացրած իրական հերոսների պատմածներից, որպիսիք են Ստեփանոս Վրոնիսյան-Շահումյանը, քահանա Տեր Ավետիքը, նաև ուրիշներ: Ինքը՝ Դուկաս Սեբաստացին, որ ավագանի ազգանունով Ստեփանյան էր, գրավոր հուշեր ուներ պատմական այդ իրադարձության մասին. «...հի, իր հուշերի եւ նշանակալի ուշ (Վենետիկ, 1978): Այդ իրատարակությունը նույն 1978 եւ 1992 թվականներին Արշակ Մարտիրոսյանի փոխարկությամբ եւ առաջաբանով լույս տեսավ նաև արեւելահայերեն:

Սեբաստացու աշխատության հիմամբ ստեղծվել է նաև Աբգար Գուլամիրյանի խմբագրած «Դավիթ Բեկը. Ընտիր պատմութիւն Դավիթ Բեկին եւ պատերազմացն հայոցն Խափանու, որք եղեն ընդդէմ թուրքաց...» տարբերակը, որը Վաղարշապատում լույս է տեսել 1871 թ., ինչն էլ ծանոթ էր Բաժնու: Իսկ Սեբաստացու աշխատությունը, այսինքն՝ գրքի մայր օրինակը, Մխիթարյան միաբան Սամուել Արամյանի աշխատասիրությամբ լույս է տեսել շատ ավելի ուշ (Վենետիկ, 1978): Այդ իրատարակությունը նույն 1978 եւ 1992 թվականներին Արշակ Մարտիրոսյանի փոխարկությամբ եւ առաջաբանով լույս տեսավ նաև արեւելահայերեն:

Վեպը գրելիս Բաժնին մեծապես օգտվել է նաև իր ճամփորդական տպավորություններից, ձեռքի տակ է ունեցել պատմական այլ սկզբնաղբյուրներ (Եսայի Հասան-Ջալալյանց, Պետրոս Դի



Սարգիս Գիլանենց, Միքայել Չամչյան, Դուկաս Ինճիճյան):

1880 թվականին վեպը արդեն պատրաստ էր: «Մշակ»-ում տպագրվելու ընթացքում (1880-1882) նա նյութի հարստացման, բնաշխարհի, պատմական միջավայրի կենդանի պատկերման պահանջ է զգում, այդ իսկ նպատակով ընդհատում է տպագրությունը եւ 1881-ի հունիսի 25 - հոկտեմբերի 30 ժամանակահատվածում ճանապարհորդում Սեծ Սյունիքում ու Փոքր Սյունիքում, այսինքն՝ Արցախում: Այդ ընթացքում ոտքի տակ է տալիս ամբողջ Արցախն ու Ջանգեզուրը, տեսնում է Գանձակը, Սիսիանը, Բարգուշատը, Չավնդուրը, Կապանը, Սեղրին, Օրդուբադը, Նախիջևանը... Հավաքում է փաստեր, հիշողություններ, ավանդազրույցներ, անուն տարատեսակ գրառումներ...

Վերադարձին ապագա իրատարակության համար նախ վերախմբագրում է տպագրված էջերը եւ ապա՝ նոր լիցք հաղորդում չտպագրված մասնական շարադրանքին: Սա արդեն Բաժնու սխրագործ էր, որ պատմության չոր ու ցամաք թվերին ուզում էր ավելացնել կենսական միջավայր, պատմաաշխարհագրական տարածություն եւ պատմականորեն ներկա ժամանակ, քանի որ վիպական գործողությունները կատարվում են որպես կենդանի ընթացք եւ ոչ թե պատմվում: Այսինքն պատմավեպը նրա համար ոչ միայն պատմության ժամանակագրություն էր, այլև մշակույթի պատմություն ինչպես էին հագնվում, ինչ կառուցվածք ունեին տները, ինչ կահավորում ունեին սենյակները, ինչ էր հայ ընտանիքը, ինչ էր հայ ժողովուրդը հասկացությունը, ինչ էին ուտում, կենցաղի ինչ առարկաներ էին գործածում, նաև ինչ ճանապարհներ ու հանգրվաններ, սարեր ու ձորեր կային: Այս ճանապարհորդությունը ոչ միայն հագեցրեց վեպի «ծարավը», այլև ծնունդ տվեց «Խամսայի մելիքությունները» (Թիֆլիս, 1882) աշխատությանը, որ Արցախի 1600-1827 թվականների պատմությունն է:

«Դավիթ Բեկ» վեպը «Մշակ»-ին զուգընթաց մաս-մաս տպագրվում է գրքով, երրորդ վերջին մասը գրքի տեսքով պատրաստ էր 1882-ի մարտին: Վեպի երեք մասը միասին որպես առանձին գիրք, առաջին անգամ լույս է տեսել 1890-ին Թիֆլիսում: Վերնագրի տակ՝ «Պատմական վեպ (1722-1728)»:

Բաժնու նպատակը ազգային

զարթոնք բորբոքելն էր. ըստ Լեոնի Կիլիկիայի անկումից հետո վերահառնումի առաջին կռվանը Սյունիքի ազգային-ազատագրական պատերազմն էր, որ սկսվեց 1722 թվականին, ավարտվեց 1725-ին Դավիթ Բեկի իշխանության գալով, 1727-ին Բեկի մահից հետո վերսկսվեց ու շարունակվեց Մխիթար Սպարապետի կողմից եւ 1730-ին ավարտվեց նրա մահվամբ:

Դավիթ Բեկի կենսագրական հարցեր կան, որոնք դեռևս քննարկվում են. ըստ այդմ՝ հոր անունը եղել է Աստվածատուր, պարսիկներն ասել են Ալահվերդի, ապրել է Տաթևում: Չափահաս տարիքում Դավիթը գնացել է Հալիժոր՝ հորեղբայր մելիք Փարսադանի մոտ, ով եւ նրան տարել է Վրաստան: Վրաստանում անցել է զինվորական ծառայության, այնտեղից էլ եկել ու գլխավորել է հայրենիքի ազատագրական պայքարը: Ըստ որոշ աղբյուրների Բեկը ունեցել է որդի՝ Մխիթար (տեր Սահակ): Կա նաև Դավիթ Բեկի Սյունյաց երկրի այլ բնակավայրում ծնված լինելու վարկած: Ոմանք, այդ թվում նաև Բաժնին, նրան սերում են Օրբելյանների տոհմից:

Այս ամենը այսպես՝ որպես պատմաբանների զբաղմունք, բայց մենք կառաջնորդվենք Բաժնու գրական կերպարի կենսապատումով կերտված է ըստ հավաստի աղբյուրների:

Բ. Վեպի գրական ճարտարապետությունը ի հայտ է բերում Բաժնու վիպասանության ամբողջ վարպետությունը: Գրողի գեղարվեստական երեւակայության հնարավորությունները անսպառ են, բայց նրա կառուցողական ձիրքը որոշակի պատմական իրականության պահանջների շրջանակում է: Վեպը, ինչպես նշեցինք, բաղկացած է երեք գրքից: Յուրավածքը միագիծ չէ, պատումի հոսանքներ կան, որոնք սկսվում են շարադրանքի սկզբում, բայց որոնք հանգույցները վերջում են: Սա բորբոքում է ընթերցողական հետաքրքրասիրությունը եւ դիպաշարը դարձնում գրավիչ:

Հեղինակն ընթերցողին միանգամից մտցնում է գործողությունների մեջ. «Մինչեւ 1722 թվականը, այսինքն՝ մինչեւ Դավիթ Բեկի հայտնվիլը, հայոց մելիքները տակավին պահպանել էին իրանց նշանակությունը» (Բաժնի, «Երկրի ժողովածու», հ. 7, երևան, «Սովետական գրող», 1985, էջ 7. հաջորդ մեջբերումները այստեղից են): Եվ սկսվում է հայոց երկրի բուն իրականության, մելիքների ով կամ ինչ լինելու մանրամասների նկարագրությունը: Բաժնին շատ արագ, մի քանի ուրվագծերով ստեղծում է վիպական կենդանի միջավայր, ինչին մեծապես նպաստում է ոչ միայն կերպարների կենսականությունը, տեղանքի տարածական ամբողջական նկարագրությունը, այլև մանրամասների ճշգրտությունը, եւ դա այնքան բնական, որ ընթերցողը հայտնվում է նրա պայմանական իրականության մեջ: Այստեղ է գեղարվեստի հմայքը եւ մեծ գրականության նշանակալիությունը:

Գործողության մեջ է մտնում Գենվազի երիտասարդ իշխան Ստեփանոս Վրթանեսյանը՝ Շահումյան տնից, որը, գրկված հայրենական ամրոցից, թափառում է Սյունյաց աշխարհում եւ մելիքներին հորդորում «միաբանվել ու ընդհանուր ապստամբությամբ թրթափել խաների ծանր լուծը» (էջ 11): Բաժնին որքան ազգապաշտ, բայց նույնքան էլ խիստ է ստրկության դատապարտված իր ազգակիցների հանդեպ, ինչը վիպական հյուսվածքի ներքին շերտով առաջ է գնում: Ջանգվածի վերածված ժողովրդին արթնացնելու հույսով՝ գրողը նաև ասում է. «Հայ ժողովուրդը կատարյալ ոչխարային բնավորություն ունի, մեկը պետք է առջեւից գնա, որ մյուսները հետեւեն նրան» (էջ 12): Հիմա այդ Սեկի հարցն է «Ո՞վ կարող է լինել այդ մեկը» (էջ 12): Այդ մեկը ի՞նքը՝ Ստեփանոսն է: Բայց ինքը ընդամենը ունեզրկված իշխան է, որովհետև Գենվազի իր ամբողջ գավառը հիմա խանի սեփականությունն է: Եվ նա որոնում է իր սմանակ այդ Սեկին, որը Դավիթ Բեկն է: Ահա նրան հայրենիք կանչելու նպատակով Օրդուբադում կնիքներ է պատվիրում մի հրեային, որպեսզի նշանավոր մարդկանց անուններով նամակներ հասցեագրի Դավիթ Բեկին:

Սա պատումի առանցքային գիծն է, բայց, զուգահեռաբար, Բաժնին խորանում է այս ոսկերիչ հրեա Հարունի կենցաղի մեջ, մտնում նրա տուն, ի ցույց դնում հրեայի եւ նրա կնոջ Եսթերի չղասավորված հարաբերությունները, ներկայացնում պատճառները, բացահայտում հրեայի բնավորությունը: 65-ամյա հրեան ամուսնացել է 16 տարեկան աղջկա հետ եւ նրան ու երեխային տան վանդակի մեջ պահում է սոված ու արհամարհված, որովհետև նրանը միայն կուսական կիրքն է: Փողի անուկ լսելիս հրեայի աչքերում փայլում է մի «...տեսակ լույս, որ կարելի է տեսնել քաղցած գայլի աչքերում միայն» (էջ 16), մինչդեռ, ոսկու եւ արծաթի կույտեր դիզելով համրեծ, նա ներկայանում է վերջին մուրացկանի պես: Վեպի ընդհանուր համակարգը նկատի ունենալով՝ այստեղ Բաժնին կարող էր այդքան չխորանալ, որովհետև դա վեպի առանցքային պահանջը չէր, բայց խորանում է ուրվագծում է մանրամասներ, շարադրանքը դարձնում հետաքրքրական եւ ստեղծում վիպական տեսանկյուն միջավայր: Այս ամենով հանդերձ հատվածը ոչ թե մնում է մեկուսի՝ որպես առանձին պատմվածք, այլ ձուլվում է վիպական համապատկերին՝ որպես տեղային դիպուկ ուրվանկար:

Բաժնին վարպետորեն կարգավորում է թե՛ վիպական տարածությունը եւ թե՛ վիպական ժամանակը. «Մինչ հրեան կպատրաստե կնիքները, եւ կպատմեն մի անցք, որ պատահեց մոտավորապես տասնհինգ տարի առաջ» (էջ 22): Հիմա արդեն 15 տարվա վաղեմությանը գործողության մեջ է մտնում Ֆաթալի խանը: Երեւում է մելիք Դավիթ Ուրացողի դուստր Սյուրին խանի հարեմի գաղղը, երեւում է ներքինի դարձած, անու-

նը փոխած, բայց հայության դատից չհեռացած ծնունդով դարաբաղցի Ամենը: Սյուրին Ամենի ուղեկցությամբ գիշերով գաղտնի այցելում է հեռավոր ժայռերի քարանձավների մեջ գերեզմարված հայերին, որոնց մեջ էր նաև Ստեփանոս իշխանը, որը, ինչպես վերջում է պարզվում, իր աղջկա՝ Ֆաթիմայի հայրն է: Սերը նրան ստիպում է դիմելու հանդուսության, եւ նա գնում է՝ փոխելու գեղարվեստի մեջ տանջվող սիրեցյալի վիրակապերը:

Բաժնին անցնում է վեպի հաջորդ գեղեցիկ եւ շատ տեսանելի պատկերներից մեկի նկարագրությանը՝ բնության գրկում կիսահրապարակով շարված են Ֆաթալի խանի կանանց բազմաթիվ վրանները. ամեն մեկը իր վրանով, իր երեխայի, իր սպասուհիների եւ եռոտանի կրակարանների առաջ նախաճաշի պատրաստության իր հոգսերի հետ է: Միակը, ով ազատ մուտք ունի բոլոր վրանները՝ ներքինի Ամենըն է, իսկ մուտքը նաև լուր է, տեղեկություն, որ վեպի հանգույցների կարգավորման գործում տեղ ունի: Ուստի՝ հարգի է նաև գաղտնի լուստությունը:

Այո՛, սա Արեւելքն է, որն ամեն մի քայլափոխի իր նուրբ խորհուրդներն ունի: Բաժնին, լինելով պատկահայ, վարպետ էր պարիկների կյանքի ու կենցաղի գաղտնիքներին տիրապետելու արվեստում: Իսկ հարեմի նկարագրությունը նրա տարերքն է. գեղեցիկ կանայք են իրենց արդուզարդերով, իրենց հնայքներով, դավերով ու խարդավանքներով, առաջինը լինելու պայքարով ու նենգությունը: Այդ նենգությունը հիմա Ջեյմաբի կողմից՝ որպես դավադրություն, ուղղվում է Սյուրինի դեմ. Ջեյմաբի սպասուհին գիշերով աննկատ մուտք են գործում Սյուրինի վրան եւ կտրում նրա հյուսքերը, ինչը մեծ անարգանք էր: Սյուրին նախկին ամուսնը Սարիան էր, հայրը մելիք Դավիթ Ուրացողը, Տաթևի մելիքությունը ստանալու բաղձանքով աղջկան ընծայել էր խանին, եւ դրա համար աղջիկն ատում էր հորը, բայց դա չէր խանգարում, որ նա փայլատակեր հարեմի կանանց մեջ: Խանը նրան Սյուրին է անվանում կյանքից վաղաժամ հեռացած իր նախկին սիրելի կանանցից մեկի անունով:

Սելիք Դավիթին մահմեդականությունը ընդունելու համար ժողովուրդն անվանեց Ուրացող եւ կոչեց «Երկրորդ Վասակ», այսինքն՝ դավաճան: Ուներ նաև թուրքի անուն, եւ աղջիկը այդ թուրքի անունով արհամարհանքով նրան ասում էր Բաղր: Ուրացող մելիքի համար իր աղջիկը խանի սիրտը շահելու գործիք էր, բայց աղջիկը չէր տրվում հոր սաղորանքներին եւ մերժում էր նրա հետ ամեն մի առնչություն: Եվ երբ հայրը ինչ որ կերպ թափանցում է աղջկա վրան եւ խնդրում նրան, որպեսզի միջնորդի եւ խանից ստանա նաև Գենվազի ու Բարգուշատի մելիքություններ, աղջիկը մերժում է՝ ապտակի պես երեսին տալով ողջակեզ տաթեւացիների ողբերգությունը:

շարունակությունը՝ էջ 6



Բժշկական կրթություն

Գիտելիքն ամենահզոր զենքն է, որի միջոցով կարող ենք փոխել հասարակարգը, երկիրը, աշխարհը

Հարցազրույց երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի սրտաբանության ամբիոնի վարիչ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **ՅԱՅԱԿ ՄԻՍԱԿՅԱՆԻ** հետ:

- Պարոն Սիսակյան, Ձեր գնահատմամբ՝ բժշկական կրթության ոլորտում, մասնավորապես՝ կլինիկական առարկաների դասավանդման ասպարեզում Հայաստանը որքանով է առաջատար եւ մրցունակ:

- Կրթությունը ամենահզոր զենքն է, որի միջոցով կարող ենք փոխել հասարակարգը, երկիրը, աշխարհը: Կրթված հասարակարգը զարգանալու ավելի մեծ հնարավորություններ ունի կրթության եւ գիտության բարձր մակարդակ ունեցող պետությունները ավելի առաջատար են: Սա ընդհանրապես՝ որպես նախաբան:

Ինչ վերաբերում է բժշկական կրթությանը, ապա այստեղ պետք է տարբերակել նախադիպլոմային եւ հետդիպլոմային փուլերը: ԵՊԲՀ-ն ունի կրթական շատ լավ ավանդույթներ՝ սկսած դեռեւս խորհրդային տարիներից: Ժամանակները փոխվել են եւ այսօր խնդիր է զարգացնել դասավանդման մոտեցումները, հագեցնել լսարանները նորարարական տեխնոլոգիաներով եւ ունենալ հագեցված կլինիկական բազաներ, վարժասրահներով հագեցված կենտրոններ:

Մեր կրթական համակարգի խնդիրներից մեկն է՝ ստեղծել ուսանողների համար բավարար եւ նպատակային հմտությունների տիրապետելու միջավայր եւ պայմաններ: Դասացուցակային առարկաներ եւ թեմաներ կան, որոնց ուսուցման վրա ուսանողը բավական ժամանակ եւ ջանք է թափում, սակայն հնարավոր է, որ հետագայում լավ մասնագետ դառնալու առումով, դրանք գործնական աշխատանքի մեջ նրան կարող են անհրաժեշտ չլինել:

Մի շարք առարկաներ, որոնք ուսանողին արդեն դպրոցում դասավանդվել է, օրինակ՝ պատմություն, լեզուներ, բուհում, իմ կարծիքով, չպետք է դասավանդվեն: Բժշկական համալսարանի ուսանողն առանց այդ էլ ծանրաբեռնված է հիմնարար առարկաների ուսուցմամբ, որոնք կարելի է հենց բժշկագիտության համար: Օրինակ՝ ժամանակակից, երբ ես էի ուսանող, ՄՍԿԿ պատմություն էինք անցնում. ես հիշում եմ այդ պատմության քննությունները հանձնելն ավելի բարդ էր, քան մասնագիտական առարկաների քննությունները:

- Լեզուների ուսուցումը, դա ե՞ս բուհում չպիտի լինի:

- Լեզուների ուսուցումը եւս դպրոցը պետք է ապահովի. բուհը, թերեւս, կարող է ունենալ որոշ մասնագիտական եւ հարակից մասնագիտական տերմինաբանական լեզուների դասընթացներ: Բժշկական համալսարանում ֆիզիկա, քիմիա նույնպես անցնում են, բայց դա պետք է լինի բժշկական ֆիզիկա կամ քիմիա, որոնք պետք է ունենան կլինիկական ուղղվածություն՝ կլինիկական

իրավիճակներում այդ առարկաների գիտելիքները կիրառելու համար...

Իմ ասածի մեջ որեւէ նոր բան չկա. սա այն փորձն է, որով աշխարհի շատ զարգացած երկրներ են առաջնորդվում: Ես կրթություն եմ ստացել բացի երեւանից նաեւ Ռուսաստանում, ԱՄՆ-ում: Ուսումնասիրել եմ տարբեր կրթական համակարգերի մոտեցումները բժշկական գործունեության կատարելագործման ուղղությամբ:

- Մեր երկրում գործող կրթական մոդելը Ձեր քննադատներից որի՞ն է ավելի մոտ:

- Ավելի շատ եվրոպական եւ ռուսական մոդելին է մոտ, բայց ներկայումս եթե արագ ու գործուն կերպով չկիրառենք դասավանդման նոր մոտեցումներ, մրցունակությունը կարող ենք կորցնել:

Ունենալով եւ պահպանելով ներկա մոդելի առավելությունները՝ հնարավոր է նաեւ ներդնել ամերիկյան կրթության մոդելի որոշ առանձնահատկություններ: Մասնավորապես՝ նկատի ունեն հետդիպլոմային կրթության շրջանում բժիշկների վերապատրաստման համակարգը...

- Ո՞ր օղակում է մեր կրթական համակարգի հիմնական բացը եւ ի՞նչ է պետք լավ բժիշկ դառնալու համար:

- Եթե մեր նախադիպլոմային կրթությունը, իհարկե որոշակի բացթողումներով հանդերձ, քիչ թե շատ արդյունավետ է, ապա հետդիպլոմային կրթությունը կլինիկական օրդինատուրան, կաղում է: Մեր հիվանդանոցների նյութատեխնիկական բազան կլինիկական օրդինատորին հնարավորություն չի տալիս հասնել այնպիսի արակտիկ մակարդակի, որն անհրաժեշտ է լիարժեք բժիշկ դառնալու համար: Պատահական չէ, որ կլինիկական օրդինատուրայից հետո բժիշկներն ստիպված են լինում նաեւ սովորել արտերկրում, որպեսզի կարողանան պատշաճ մասնագիտական պրակտիկա անցնել: Իհարկե, լավ բժիշկ դառնալու համար անհրաժեշտ է նաեւ անընդհատ ինքնակրթվել. առանց դրա՝ հնարավոր չէ մասնագիտական հաջողություններ ձեռք բերել... Ի դեպ, ինքնակրթվելու մոտեցումը համարվում է պարտադիր բաղադրիչ արեւմտյան երկրներում, ինչպես նախադիպլոմային, այնպես էլ հետդիպլոմային շրջաններում ունենալով հստակ սահմանված գնահատման չափորոշիչներ:

- Հետդիպլոմային կրթության հիմնական խնդիրը հիվանդանոցների նյութատեխնիկական բազայի ոչ բավարար վիճակն է, որի մասին Դուք արդեն նշեցիք, թե՞ այլ խնդիրներ եւս կան:

- Մի քանի պատճառներ կան՝ նյութատեխնիկական բազան դրանցից մեկն է եւ ամենազխափորձը: Երկրորդը՝ բժիշկը հետդիպլոմային կրթության ընթացքում պետք է ակտիվ ներգրավված լին-



նի կլինիկական աշխատանքներում, պարտադիր իրականացնի որոշակի քանակով հարկլինիկական հետազոտություններ, տիրապետի համապատասխան հմտությունների: Օրինակ՝ Եվրոպայում եւ ԱՄՆ-ում կա հատուկ մշակված ծրագիր օրդինատորների համար, եթե նա չի իրականացնում որոշակի ծավալի աշխատանք՝ համապատասխան հմտությամբ, նրան հետդիպլոմային կրթության վկայական չի տրվում: Ենթադրենք, եթե խոսում ենք սրտաբանի մասնագիտության մասին, նա հետդիպլոմային կրթության ընթացքում պետք է իրականացնի որոշակի քանակությամբ հետազոտություններ, ինքնուրույն հերթապահություններ եւ այլն:

- Բացի նյութատեխնիկական բազայից՝ մյուս օբյեկտիվ պատճառը, ըստ Ձեզ, ո՞րն է:

- Մեզ մոտ բժշկական կրթություն են ստանում ավելի շատ թվով ուսանողներ, քան կլինիկական օրդինատուրայի շրջանակում գործնական պրակտիկա կազմակերպելու հնարավորություն ունեն մեր հիվանդանոցները: Պետք է նաեւ հաշվի առնել, որ բացի ԵՊԲՀ-ից՝ Հայաստանում գործում են մի շարք ոչ պետական բժշկական բուհեր, որոնց կրթության որակը շատ անգամ չի համապատասխանում չափորոշիչային պահանջներին: Այդ մասին է վկայում այն փաստը, որ մասնավոր բուհերի շրջանավարտների ընդամենը 15-20 տոկոսն է հաղթահարում ԵՊԲՀ կլինիկական օրդինատուրա ընդունվելու քննական շեմը:

Բացի այս՝ նոր տեխնոլոգիաներից ոչ բոլորն են հասանելի եւ առկա Հայաստանի առողջապահական հաստատություններում:

- Ըստ Ձեզ՝ ո՞րն է ելքը առաջնային անելիք ունի բուհը, պետությունը, թե՞ հիվանդանոցը...

- Երեքը միասին:

- Պարոն Սիսակյան, նյութատեխնիկական բազայի խնդիրը երեւի միշտ է եղել. ես հիշում եմ խորհրդային տարիներից բժիշկները կլինիկական օրդինատուրան անցնում էին Մոսկվայում կամ Սանկտ-Պետերբուրգում:

- Այս խնդիրները նոր չեն խորհրդային տարիներից եւ գալիս: Գիտե՞ք՝ ցավալին որն է. օրինակ՝ ԱՄՆ-ում միջին առաջադիմությամբ ուսանող կարող է դառնալ հաջողակ բժիշկ, որովհետեւ համակարգն ու միջավայրը նրան տալիս են այդ հնարավորությունը: Ի դեպ, այնտեղ հետդիպլոմային կրթությունը երբեմն ավելի եր-

կար է տեսնում, քան նախադիպլոմային կրթությունը: Օրինակ՝ ԱՄՆ-ում հետդիպլոմային կրթության տեւողությունը 6 տարի է, մեզ մոտ՝ երեք տարի: ԱՄՆ-ում մշակված վեց տարիներից առաջին երկու-երեք տարիների հերթապահությունը կրթությունը ներառում է թերապեւտիկ մասնագիտությունները, իսկ հետո նոր, օրինակ, սրտաբանությունը:

Ամերիկյան մոդելը ավելի կատարելագործված է, բայց այն մեզ մոտ կիրառելի իրատեսական չէ: Եվրոպական երկրներից եւս շատ բժիշկներ ձգտում են հետդիպլոմային կրթության ընթացքում գոնե 1-2 տարով ԱՄՆ մեկնել: Դա հետագայում օգնում է՝ նեղ մասնագիտացում ստանալու առումով:

Դուք ճիշտ նկատեցիք՝ խորհրդային տարիներին գնում էին Մոսկվայի, Սանկտ-Պետերբուրգի առաջատար կլինիկաներ: Նույն միտումը պահպանվում է նաեւ այսօր:

- Իսկ ո՞րն է սուբյեկտիվ գործոնը, որի մասին վերելում մշեցիք:

- Օրդինատորի հաջողությունը պայմանավորված է առաջատար հիվանդանոցում սովորելու, ինչպես նաեւ երիտասարդ բժիշկի նպատակասլաց լինելու հանգամանքներով: Եթե սովորողն ունի լավ ղեկավար, զուգահեռաբար ընտրված ուղղությամբ Հայաստանում համեմատաբար զարգացած պայմաններ ենք ունենում, սովորողն էլ ջանասիրաբար աշխատում է ինքն իր վրա, ապա կարելի է արդյունքի հասնել նաեւ Հայաստանում:

- Մեզ մոտ Հայաստանում, սրտաբանության զարգացման հիմնական միտումները կարելի է բավարար համարել: Վերջին տարիներին, կարծես թե, շատացել է ստենտավորումների քանակը. սա որքանով է դրական տեղաշարժ:

- Ստենտավորումները եւ բաց վիրահատությունները Եվրոպայում սկսվել են կիրառվել նախորդ դարի 70-ականների վերջին, լայնորեն տարածվել են 90-ականներին: Առաջին արտոնկորումար շունտավորումն իրականացվել է դեռեւս 60-ականներին, լայն տարածում է գտել 80-ականներին: Հայաստանում ստենտավորումներն սկսվել են 90-ականներից՝ այսինքն 20 տարի հետո: 2000-ականներին ավելի լայն տարածում գտավ, եւ միայն վերջին 7-10 տարիներին դրանք զանգվածային դարձան, երբ պետությունը ֆինանսական փոխհատուցման համակարգ մտցրեց:

- Եվրոպայի եւ ԱՄՆ-ի առաջատար կլինիկաներում սրտային ինչպիսի՞ միջամտություններ կան բուժումներ կան, որոնք մեզ համար անհասանելի են:

- Կան բարդ պրոցեդուրաներ, օրինակ՝ օժանդակ սարքերի տեղադրում, որ մեզ մոտ չի իրականացվում: Խոսքն այսպես կոչված «արհեստական-մեխանիկական սրտի» մասին է, որը փոխարինում է ծանր վիճակում գտնվող սրտանկանին: Նման սարքերը ցուց-

ված են այն հիվանդների համար, որոնց կյանքի տեւողությունը, ակնկալվում է, որ կարճատեւ է՝ պայմանավորված իրավիճակի բարդությամբ: Մեն հիվանդի համար նման ծառայության միջին արժեքը, չհաշված հիվանդանոցային խնամքը, մոտ 80 հազար դոլար է կազմում:

Մեզ մոտ չի իրականացվում սրտի փոխպատվաստում՝ դարձյալ սարքավորումների բացակայության եւ թանկարժեք լինելու պատճառով: Համեմատության համար ասեն, որ մեր տարածաշրջանի երկրներից Ռուսաստանում, Բելառուսում, Դազախստանում սրտի փոխպատվաստում իրականացվում է մեծ քանակությամբ: Ես կարծում եմ, որ այդ ծառայության կարիքը մեզ մոտ ներկա դրությամբ կարող է ունենալ մինչեւ 1000 հիվանդ:

Հայաստանում նման ծառայության հասանելիությունը կնպաստեր ինչպես սրտաբանության զարգացմանը, այնպես էլ կյանքերի նկատելի երկարացմանը: Համակարգված, պետական ֆինանսավորմամբ չեն իրականացվում նաեւ ներանոթային մեթոդով փականների պրոթեզավորումները, որոնք շատ կարելի են: Մի խոսքով՝ խնդիրներ կան, եւ դրանք հիմնականում կապված են ֆինանսավորման ծավալների հետ:

- Սիրտ-անոթային հիվանդությունների աճ մեր հասարակության մեջ նկատվում է, թե՞ սրտի խնդիրները որոշակի կայուն հատվածին բնորոշ հիվանդություններ են, որոնք միշտ եղել են ու կան:

- Հայաստանը պատկանում է այն երկրների շարքին, որտեղ սիրտ-անոթային հիվանդությունների տարածումը աճի միտում ունի եւ մասնագիտությունը մոտենում է 60 տոկոսի: Եվրոպական երկրներում այդ ցուցանիշը նվազման միտում ունի՝ 50 տոկոսից քիչ է: Խոշոր հաշվով՝ սիրտ-անոթային հիվանդությունների մահացության տոկոսը ողջ աշխարհում բարձր է համարվում ի հասնեմատ այլ հիվանդությունների:

- Ի՞նչ պետք է անել՝ դրական տեղաշարժ ունենալու համար:

- Դրական տեղաշարժ ունենալու համար առաջին նախապայմանը կանխարգելիչ միջոցառումներն են՝ առաջինը առողջ ապրելակերպը: Աճող պետք է ինքնակրթված լինի, մարզվի, օրվա մեջ որոշակի տարածություն անպայման անցնի քայլելով, ընտրի առողջ սննդակարգ: Վերջերս ուսխտությամբ տեղեկացա, որ դպրոցներում վերջապես սկսել են ավելի լուրջ ուշադրություն դարձնել առողջ ապրելակերպի կրթությանը:

Շատ կարելի է նաեւ ծխախոտի, քնրանոլության, սակավաշարժության եւ ավելորդ քաշի դեմ պայքարը: Չափազանց կարելի է զարկերակային ճնշման վերահսկումը, վերջապես պարբերաբար բժշկի այցելելու մշակույթը:

Հարունակությունը՝ էջ 7

Բաժնու «Դավիթ Բեկ» պատմավեպը

սկիզբը՝ էջ 4

Հայրը դաժան էր հպատակների հանդեպ: Հարկը չվճարելու դեմաց բախտում էր ամեն ինչ, իսկ դրանից հետո մահմեդականների համար վաճառքի հանում անգամ նրանց երեխաներին: Նա ավելի դաժան էր, քան թուրքն ու պարսիկը: Կեղեքում էր ժողովրդին եւ բաժին հանում խանին, որպեսզի մնա իր տեղում: Ահա, նրանից դժգոհ, բայց անճար ժողովուրդը այլ ելք չի գտնում, քան ցուցադրական ինքնահրկիզումը խանի վրանի մոտ. հուսահատ այդ քայլով նրանք փորձում էին խանի ուշադրությունը հրավիրել իրենց վիճակի վրա: Ինքնահրկիզվողների մեջ էին նաեւ Դավիթ Բեկի ծնողները, այդ ողջակեզից Ահմեդի ջանքերով փրկվում է միայն Դավիթը եւ ուղարկվում Վրաստան:

Մեկից Դավիթ Ուրացողը միայնակ չէր, նրա նման մեկն էլ կար մելիք Ֆրանգյուլը, ով, թեւէ քիչ ուշացումով է մահմեդականությունը ընդունում, բայց գերազանցում է չարության ու խորամանկության բոլոր հնարավոր սահմանները: Այդ երկու մելիքները արտաքուստ էին միայն միասին, ներքուստ աչքները մեկը մյուսի ունեցվածքի վրա էր: Մելիք Ֆրանգյուլը եղել էր պարսկահպատակ մահմեդական, հասել դիրքի, հարստության, դավադիր քայլերից հետո մատնվել էր անհաջողության, վերստին դարձել էր քրիստոնյա, իսկ հիմա ժամանակն էր հանուն շահի վերստին վերադառնալու մահմեդականության: Դավանափոխությունից հետո նա նոր անուն է ստանում՝ Ալի բեկ:

Արեւելյան միջավայրը լիարժեք դարձնելու համար Բաժնին ստեղծում է նաեւ իմամի ու դերվիշի կերպարներ, ովքեր Ֆաթալի խանի մերձավոր շրջանակի մեջ էին եւ, ըստ խանին մոտիկ լինելու աստիճանի, մեծ ընծաներով հարցեր էին լուծում: Իմամը վաթսուներեք տարեկան էր, ուներ տասներկու կին եւ դերվիշից երիտասարդացնող դերվի էր սպասում, հանուն ինչի պատրաստ էր ամենայն գոհողության: Մտադիր էր ամուսնանալ տասնչորս տարեկան մի կույսի հետ եւ դերվիշի «մաջուրը» (ճարը) օրախնդիր հարց էր: Դերվիշը համազել է, որ իր դեղամիջոցը նրա մազերը պետք է սեւացնի եւ հարյուրավոր տարիներով երկարեցնի կյանքը: Կար նաեւ Միրզա-Ջաֆար անունով մեկ այլ դերվիշ, որ կարեկցություն է հայտնում ողջակեզ հայերի համար: Արեւելքը առատ է նաեւ սպասավորների, մանկավանդների խամաճիկների ներկայությամբ եւ հատկապես նրանց նուրբ լրտեսության արվեստով: Խոսքը չավարտած՝ հակառակորդն արդեն գիտեր ինչ եւ խոսել... Տեղեկատվական հոսքի այս միջոցը վեպի հանգույցները շարկապող կարելու միջոց է, հակառակ դեպքում գործողությունների հաջորդական կապը չի պահպանվի:

Ահա հայ ընչաքաղց մելիքների ևրացումների, հայ գերիների տանջանքների, Տաթևի դժգոհ բնակչության ինքնահրկիզումնայն այս ծանր պահին հայտնվում է Թորոս իշխանը եւ փրկագնում 125 հայ գերիներին, մի մասն էլ մահացել էր: Այս գերիների մեջ էր նաեւ Ստեփանուրը: Երկու հայ մելիք-

ներն ամեն կերպ փորձում են ծախողել գերիների փրկագնան գործը՝ այստեղ եւս ցույց տալով իրենց չարագործ, դավաճան դեմքը: Գերիների փրկագնան կապակցությամբ Ֆաթալի խանին միջնորդում է Սյուրին եւ հաջողում: Իսկ Թորոս իշխանը իր երկու հարյուր զինվորների ուղեկցությամբ եկել էր առատ ընծաներով ազնվացեղ ճուլզներ, ոսկե դրամներ, բարիքներով ծանրացած սինիներ, մատուցարանների վրա զենքեր, սկուտեղների վրա սկահակներ, ակնազարդ անոթներ...

Վեպի երկրորդ գլուխը կարելի է վերնագրել «Դավիթ Բեկը Մցխեթում»: Սա արդեն ուրիշ աշխարհ է, ուրիշ միջավայր՝ դարձյալ շատ լավ ծանոթ գրողին: Մցխեթն է, այն տարիների Վրաստանի մայրաքաղաքը, որ այլ բան չէր, քան աղքատիկ մի ավան եւ այդ երկրի ղեկավարն է, որին իրենք թագավոր են ասում, իսկ պարսիկները վալի, որ այլ բան չէ, քան ավատակամ իշխան, մեծ իշխան:

Հիմա արդեն գրողի երեւակայությունը փայլատակում է նոր միջավայրի նկարագրությամբ եւ գլխավոր հերոսին իր պատմական կերպարի մեջ տեղադրելու հնարամտությամբ: Այդ ամենը ընթացքում՝ վիպական ժամանակի ճիշտ համակարգմամբ, իսկ հիմա արդեն նա դեմ է հեղինակություն, եւ Ստեփանուրը իր հավատարիմ մարդկանցից թիկնապահ Աղասու միջոցով նրան նամակներ է ուղարկել՝ երկու մեծ ծրար, որոնց մեջ Սյունյաց աշխարհի ցավալի դրության նկարագրությունն է եւ նամակագիրների առաջարկը՝ վերադառնալ հայրենիք եւ գլխավորել ազատագրական շարժումը: Դանակը հասել էր ոսկորին, հայրենիքը խեղդամահ էր լինում, ժողովուրդը այլատերվում էր եւ ստաբանում ինքը իրենից: Մեռնում էր մի ամբողջ ժողովուրդ, եւ չկար ոչ մի ապավեն: Ֆաթալի խանի դաժանությունները, նրա դրածո ընչաքաղց ուրացյալ հայ մելիքների շահատակությունները ամայացնում էին երկիրը: Խաբված մի ժողովուրդ եւ հայրենիքի մի քանի ուժեր առաջնորդ էին որոնում: Նամակների հետ ուղարկել էր նաեւ հանրագիր «...եւ հորդորում էր ժողովրդի ներկայացուցիչների ծայրը հարգել, հորդորում էր թողնել վրաց ծառայությունը եւ փութով աճապարել դեպի հայրենիք» (էջ 125): Նաեւ ավելացնում է. «Մեր ազնվական դասը փչացած է, Դավիթ, նրանց վրա մեծ հույս դնել չէ կարելի: Դարերի ընթացքում պարսից ազդեցության ներքո ազնիվ արյունը նրանց երակներում խառնախափվեցավ: Այժմ ժողովրդին պետք է փրկե ժողովրդի մարդը՝ նրա միջոց դուրս եկած նրա հարազատ որդին» (էջ 125):

Ստեփանուրը նամակներն ուղարկել էր այն իրեն ոսկերիչի մոտ պատվիրած հեղինակավոր մարդկանց կնիքների դրոշմով՝ առանց այդ հեղինակությունների գիտության, եւ Բեկի հետ առաջին իսկ հանդիպմանը խոստովանում է, որ դա իր հնարամտության արդյունք է, եւ ոչ թե այդ, թեւէ հայրենասեր, բայց զգուշավոր մարդկանց մտահոգության: Հայրենիքը ձեռքից գնում է դու պետք է գալիր:

Եվ մինչ Դավիթ Բեկը կպատրաստվի իր հավատարիմ մարդ-



կանցով վերադառնալու Հայաստան՝ ներկայացվում է նրա կյանքը ողջակիզումի տեսարանից մինչեւ վերադարձ: Ներքինիպետ Ահմեդի անմակով Վրաստանում նա պիտի պատասպարվեր Օրբելյան իշխանի տանը, որը, սակայն, նրա ժամանումից օրեր առաջ մահացել էր: Տան մյուս անդամներին նամակը ոչինչ չէր ասում: Սյուրին Դավիթին գումար էր տվել, որոշում է ինքնուրույն ապրել: Մի հայ մանրավաճառ նրան պահում է իր մոտ, աստիճանաբար կողոպտում եւ ցույց տալիս տան ելքի դռները:

Ինքնավորումնայն այս թափառումների ընթացքում նա տեսնում է «Վրացու արհամարհանքը, ատելությունը, դառն զզվանքը դեպի ամեն մի հայ, ինչը «...նետի պես ծակում էր նրա սիրտը», ուստի՝ «...վրացուց օգնություն խնդրել՝ մահվան չափ ծանր էր նրան» (էջ 152): Քաղցը կեղեքում է, բայց արժանապատվությունը գետնով չի տալիս... Թափառումները տանում են դեպի դաշտերը, ուր հանդիպում է սարերի որդուն՝ իշխանական հոտերի հովվապետ Սիկոյին: Հետո նրանք իրար հետ պիտի ճշտեին համակեցության օրենքը. «Վրացու աստվածը վրացի է, հայինը՝ հայ» (էջ 185):

Այստեղ էլ դաշտերում զբոսնող աղջիկների խմբի մեջ տեսնում է գեղեցկուհի Թամարին եւ հովվից իմանում նրա ով լինելը: Իսկ աղջիկը իշխանական գերդաստանից էր, վրաց մեծ իշխանի հանգուցյալ եղբոր աղջիկը: Դավիթ Բեկը մնում է հովվի մոտ, դառնում նրա օգնականը: Սիրաբանում է հաճախակի այդ կողմերում զբոսանքի եկած աղջկա հետ, եւ սերը փոխադարձ էր: Աղջկան անտառային պտուղներ է նվիրում ու դաշտային ծաղիկներ:

Պատանին վարժվում է նաեւ որսորդության մեջ, սովորում հրացան օգտագործել, այստեղ էլ ստանում է «...իր սկզբնական պատերազմական կրթությունը» (էջ 160): Որսորդի նրա համաբավը տարածվում է, անգամ հասնում մեծ պարոնին, որի սեղանին երեքն է ընծայում դրա դիմաց ստանալով վառող, գնդակ ու գինի: Սիկոն, տեսնելով տղայի աճն ու հաջողություններ, մարգարեանում է. «Ես իմանում եմ, դու վելջը թավաղ (ազնվական) կդառնաս» (էջ 160):

Երեք տարի անց ահա այստեղ էլ մեծ պարոնի գերդաստանի եւ ազնվականների մի դաշտահանդեսի ժամանակ Դավիթը ստույգ մահից փրկվում է անգույշ պատահականությամբ թե ինքնակամ լեռնային վարար գետն ընկած Թամարին: Ուշքի գալուց հետո աղջիկը երջանիկ էր, որ իրեն փրկողը Դավիթն է եւ «...իր անձը համարում է նրա սեփականություն» (էջ 191):

Բաժնին մինչ այդ մանրամասների գեղեցկությամբ նկարագրում է դաշտահանդեսի տոնախմբությունը՝ մատուռ, սրբություն, տոնական հագնված հասարակություն, բաղթեմի կանայք, խանդ, չարախոսություն, քեֆ, ուրախություն, նվագածուներ, խաղեր, մրցումներ, սպասավորներ, աղախիներ... Բաժնին ուղղակի նկարում է այս պատկերը, կենդանացնում միջավայրը եւ պարեցնում հերոսներին: Եվ դա ոչ թե նկար է, այլ շաժանկար՝ խոշոր պլան, փոքր պլան, դիմանկար, ուրվանկար, գիծ, հետագիծ. այն, ինչին հետո պետք է ասեին կինո: Այսինքն՝ Բաժնու շարադրանքը իրարահաջորդ գործողությունների մեջ շատ տեսողական է:

Դավիթն իր անձնագրի խիզախության համար արժանանում մեծ իշխանի խրախուսանքին. նրան տրվում է թավադության աստիճան, գրվում է նրա ազնվականության հրովարտակը, թեւէ ինքն էլ անգամ չգիտեր, որ ծնունդով ազնվական է. ըստ Բաժնու՝ «Նա տոհմակից էր Սյունյաց երկրի Օրբելյանների հետ» (էջ 196): Դրանից հետո արդեն նրա առջեւ բացվում են պալատի դռները, նա այդուհետ ընդունված էր պալատում: Նաեւ մտնում է արքայական դրանիկ խմբի մեջ:

Հեշտ չէր նրա ճանապարհը, որովհետեւ անպակաս էին վրացիների ուղեկից խոսքերը՝ «Հայ է, բայց... Հայ էլ կա, հայ էլ է» (էջ 192): Բաժնին նաեւ ավելացնում է. «Վրացու կինը իր խելքով միշտ բարձր է տղամարդից» (էջ 194), ինչը եւ վճռորոշ է լինում Դավիթի կյանքում: Որպես զինվորական փառավոր հաղթանակներ է տանում Վրաստանի վրա արշաված լեռնային ցեղերի՝ լեզգիների դեմ եւ ընծա ստանում մի գյուղ:

Բաժնին մանրակրկիտ նկարագրում է Դավիթ Բեկի գյուղը,

նրա տունը, տան վրացի սպասավորներին, նրանց նիստոկացը, կենցաղը, բարքերը, իրադրության մեջ ստեղծում կինոյան կերպարներ (Թինա, Դարո, Քեթեան, Սոփիո, Փեփեյլո, Նինո, Փրիդոն, Նիկո), նաեւ եզրափակողների հացն է ու Կախեթի գինու կարասներն են... Երեւում են Բեկի տան այցելուները: Սպասավորների խոսք ու գրույցի մեջ ուրվագծվում է նրա կերպարը, ով ոչ թե ծեծում ու կողոպտում էր իր ճորտերին, ինչպես մյուսները, այլ հոգում էր նրանց կարիքները, ինչի համար եւ սիրված էր:

Իրիկնահացի սեղանի պատրաստություն կա, հյուրասիրություն կա. այստեղ եւս գրողը չի անտեսում մանրամասները, որովհետեւ հացի սեղանը մի ուրիշ կենցաղային մշակույթ է, քանի որ «...կերակուրները կարելի է ընդունել որպես մի ժողովրդի ճաշակի նրբության արդյունք եւ որպես նրա բարեկեցության արտահայտություն» (էջ 143): Հյուրասիրություն, ճաշկերույթ, երգ ու պար՝ իրական միջավայր... Իսկ Դավիթ Բեկի հյուրերը, որոնք նաեւ նրա ընկերներն էին, երեւելի մարդիկ էին՝ իշխանական տոհմի շառավիղ, բնիկ սյունեցի՝ Արցախի կողմերից, Մխիթար սպարապետ, ով մոտիկ հարաբերություններ մեջ էր վրաց մեծ պարոնի հետ եւ կլիներ 25 տարեկան. Ստեփանոսի ուղարկած նամակները կարդում է նաեւ Մխիթարը եւ ասում.

«Գնանք, բարեկամ, հայրենիքը կոչում է մեզ» (էջ 199): Բեկի մտեղի միջավայրը մեջ էր այլ երեւելիներ՝ պարսից արքունիքի տիտղոսակիր, բնիկ սյունեցի հայրենասեր Բայինդուր իշխանը, ով, նամակները կարդալուց հետո, իր հերթին նույնն է ասում. «Գնանք, եւ պատրաստ եմ, հայրենիքը կոչում է մեզ» (էջ 202): Այս ուժերի շուրջ համախմբվում են լուռեցի Ավթանդիլ գնդապետը, շուրջեցի Ջաքարիա իշխանը եւ երեւանցի, թիֆլիսեցի, շամախեցի, գանձալեցի, դազախեցի, նախիջեւանցի, վաղարշապատցի այլ քաջեր... Նրանց հետ էր նաեւ հյուսիսային ցեղերի դադստանցիների հետ գերիների փոխանակությամբ, առք ու վաճառքով զբաղվող Սաքուլը, ով իր հերթին մոտ էր Պաղատանի իմամի հետ եւ հանձնարարություն է ստանում օգտագործել իմամի հնարավորությունները Հայաստանի մահմեդականների վրա ազդելու համար, նրանք նույն հավատից էին, բայց տարբեր: Նպատակը լեզգիներին Հայաստանի մահմեդականների դեմ հանելն էր:

Դավիթը նաեւ գիտեր, որ «...պատերազմի գործը պետք է պատերազմով սնանվի» (էջ 212), ըստ որի՝ նյութական միջոցներ պետք է հայթայթել հաղթանակներով. «Աղեքսանդր Սակեղունացիները, Լեւոն Թեմուրները, Չինգիզ խաները իրանց հետ գանձ էին ման ածում, այլ կերակրվում էին իրենց սրով» (էջ 213),- այս համեմատություններն ու այս մտայնությունն ինքնին արդեն հաղթանակի գրավական են:

(Հարունակելի)

Դավիթ ԳԱՄՊՐՅԱՆ
բանասիրական
գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Մշակույթ

Պատանի երաժիշտների հաշվետու համերգը

ՀՀ մարզերի, երեսնի երաժշտական եւ արվեստի դպրոցների պետական պատվերով սովորող սաները հանդես են եկել «Ավանդույթների պահպանները» խորագիրը կրող հաշվետու համերգով, որը ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ կազմակերպել էր «Մշակույթային աջակցության հիմնադրամը»:

Համերգին ներկա է եղել ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արա Խզմալյանը: Նախարարի տեղակալի խոսքով՝ իրեն քաղաքակիրթ կարող է համարել միայն այն ազգը, որն իր հոգեւոր նկարագրով հակված է դեպի համաշխարհային դասական արժեքները, իսկ քիչուցուցում պահում է իր արմատները, ժողովրդական երաժշտությունն ու արվեստը:

Մշակույթային աջակցության հիմնադրամի ղեկավար Նելլի Սարգսյանի տեղեկացմամբ՝ «Հայաստանի երաժշտական եւ արվեստի դպրոցներում ազգային, փողային եւ լարային նվագարանների զծով ուսուցում» պետական ծրագրի շրջանակում յուրաքանչյուր տարի երեխաներն անվճար ուսուցման հնարավորություն են ստանում: Տարիներ ի վեր նախարարության նախաձեռնությամբ «Հայաստանի երաժշտական եւ արվեստի դպրոցների համար երաժշտական գործիքների ձեռքբերում» ծրագրի շրջանակում երաժշտական գործիքներ են տրամադրվում երաժշտական եւ արվեստի դպրոցներում սովորող պատանի երաժիշտներին:

Ի գիտություն

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 2204-Ա/2 հրամանով հաստատվել է «Պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական կրթական ծրագրով կրթություն ստացած անձանց 2022 թվականի պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման» ընթացակարգը:

Պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական կրթական ծրագրով կրթություն ստացած եւ վերջին 10 տարվա ընթացքում ուսումնառած մասնագիտության համապատասխան ոլորտի 3 կամ վերջին 3 տարվա ընթացքում 1 տարվա աշխատանքային ստաժ ունեցող շրջանավարտի պետական ամփոփիչ ատեստավորման քննություններին մասնակցելու համար փաստաթղթերն ընդունվում են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունում (հասցեն՝ Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 502 սենյակ) 2022 թվականի դեկտեմբերի 1-ից 23-ը ներառյալ՝ բացառությամբ շաբաթ եւ կիրակի օրերի, ժամը 10:00-ից մինչև 17:00 (ընդմիջում՝ 13:00-14:00):

Պետական ամփոփիչ ատեստավորման քննություններին մասնակցելու համար պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական հաստատության շրջանավարտը սահմանված ժամկետում ՀՀ կրթության, գիտության մշակույթի եւ սպորտի նախարարություն է ներկայացնում.

- 1) լրացված դիմում-հայտ՝ համաձայն ձև 1-ի,
- 2) ավարտական փաստաթղթի (դիպլոմի) ու ներդիրի (միջուկի) (չներկայացնելու դեպքում՝ բացատրություն ներդիրի բացակայության վերաբերյալ) բնօրինակները եւ պատճենները,
- 3) անձը հաստատող փաստաթղթի (անձնագիր, զինվորական գրքույկ, փախստականի վկայական, Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիր, կացության վկայական) բնօրինակը եւ պատճենը,
- 4) 2 լուսանկար (3 X 4 չափի),
- 5) տեղեկանք աշխատանքի վայրից:

Դիմում-հայտը լրացվում է պահանջվող փաստաթղթերը ներկայացվում են շրջանավարտի կամ նրա լիազորված անձի կողմից՝ ներկայացնելով համապատասխան լիազորագիր:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (010) 599-623 հեռախոսահամարով կամ օգտվել ՀՀ ԿԳՄՍ նախարարության escs.am կայքից:

Ի գիտություն ընդունել նաեւ, որ պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական կրթության ավարտական փաստաթուղթ (դիպլոմ) ունեցող շրջանավարտը, որը չունի վերջին 10 տարվա ընթացքում ուսումնառած մասնագիտության համապատասխան ոլորտի 3 կամ վերջին 3 տարվա ընթացքում 1 տարվա աշխատանքային ստաժ, կարող է իր ուսանողական իրավունքը վերականգնել՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 5-ի N 1278-Ն հրամանի պահանջների եւ առնվազն մեկ ուսումնական տարի ուսումնառելուց հետո մասնակցել իր ուսանողական իրավունքը վերականգնած ուսումնական հաստատությունում պետական ամփոփիչ ատեստավորմանը:



Գիտելիքն ամենահզոր զենքն է, որի միջոցով կարող ենք փոխել հասարակարգը, երկիրը, աշխարհը

սկիզբը՝ էջ 5

- Ջարկերակային ճնշումը կապված է սիրտ-անոթային խնդիրների հետ: - Դրան նպաստող ամենահզոր գործոններից է: - Իսկ այդ հիվանդությունների երիտասարդացումն նկատվում է: - Այո՛, նկատվում է ոչ միայն մեր երկրում, այլև ամբողջ աշխարհում, այդ թվում՝ նաեւ ԱՄՆ-ում: Պատճառները ամենուր նույնն են՝ սթրեսներ, սակավաշարժություն, որը գնալով ավելի մեծ տեղ է գրավում, ծխախոտի չարաշահում... Բայց այնտեղ համակարգված պայքար են իրականացնում դրա դեմ պետական հստակ մոտեցում կա, հսկայական միջոցներ են ներդրվում կանխարգելիչ միջոցառումների վրա: - Եթե հակիրճ ձեւակերպենք՝ ի՞նչ պետք է անել՝ առողջ սիրտ ունենալու համար: - Շատ քայլեր, չժխել, խուսափել սթրեսներից, հետեւել սննդակարգին, վերահսկել խոլեստերինի քանակը արյան մեջ, չունենալ



ավելորդ քաշ, ակտիվ չափավոր - Հայկական սիրտը, ըստ մեր ազգային գենոտիպի, ինչպիսի՞ առանձնահատկություններ ունի: - Ցանկանում են, որ մեր ազ-

զաբնակչությունը ցուցաբերի հանդուրժողականություն, լինի համբերատար, վարի ֆիզիկապես ակտիվ ապրելակերպ: Ավելորդ էնոցիաները բացասաբար են ազդում սիրտ-անոթային համակարգի վրա. այս մասին պետք է միշտ հիշել: - Ի՞նչ կավելացնեիք: - Հասարակությունը, բնակչությունը, պետական մարմինները պետք է միջոցառումներ իրականացնեն. որոշակի տարիքից սկսած՝ կան պարտադիր կանխարգելիչ մոտեցումներ, որոնց բոլորը պիտի հետեւեն: Օրինակ՝ 40 տարեկանից հետո բոլորի համար պարբերաբար եւ պարտադիր պետք է կատարվի սրտի աշխատանքի հետազոտություն՝ էլեկտրասրտագրություն (ԷՍԳ), ինչպես նաեւ արյան պլազմայի մեջ գլյուկոզայի, խոլեստերինի որոշում: Եթե հիվանդությունը հայտնաբերվում է նախնական փուլում, բուժումն անհամեմատ ավելի հեշտ է:

Հարցազրույց՝ Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

Մասնագիտական կրթություն և ուսուցում

«Նախկինում երբեք այսքան ուսանող չենք ունեցել»

Արթիկի պետական քոլեջը տարածաշրջանում միջին մասնագիտական միակ պետական կրթական հաստատությունն է: Ուսումնական գործընթացի լիարժեք կազմակերպման նպատակով քոլեջը համալրված է համապատասխան գույքով և տեխնիկական միջոցներով, կահավորված կաբինետներով, լաբորատորիաներով և արհեստանոցով:

Քոլեջի տնօրեն Աննան Դուլիջոյանը մեզ հետ զրույցում նշում է, որ ուսհաստատության հիմնական նպատակն ազգային, բարոյական և համամարդկային արժեքների պահպանմամբ կրթության կազմակերպումն է, անձի մտավոր և հոգեկոր զարգացման պահանջների բավարարումը: «Վերջին տարիներին ՄԱՌՆ ոլորտը գտնվում է հանրության ուշադրության կենտրոնում հանդիսանալով անհատական, տնտեսական և սոցիալական կարողությունների առաջնորդող շարժիչ ուժ: Մենք եւս անմասն չենք այս առաջընթացին: Գիտակցելով, որ այն կարևոր դեր է կատարում երիտասարդների զբաղվածության խթանման գործում և ապահովում է երկրի տնտեսական զարգացման համար անհրաժեշտ հմտություններ ու կարողություններ, մենք նպաստում ենք աշխատանքի վրա հիմնված ուսուցմանը: Համադրելով գործնական և լսարանային ուսուցումը՝ այն հնարավորություն է ընձեռում ուսանողներին ձեռք բերել ժամանակակից գիտելիքներ, հմտություններ և կարողություններ՝ աշխատանքային կայուն տեղ գրավելու համար: Անխոս, սա պահանջում է պետական և մասնավոր հատվածների միջև համագործակցություն», - նկատում է Աննան Դուլիջոյանը ընդգծելով, որ այդ նպատակով քոլեջում իրականացվում են դուալ կրթական համակարգի փորձարկում և մասնավոր ուսուցում ԱՅՈՒ ձևաչափով:

Ըստ մեր զրուցակցի՝ քոլեջն ունի մասնագիտություններ, որոնք արդեն տարիներ շարունակ գործում են: Նա վստահեցնում է, որ դրանցից երեքը՝ «Հաշվապահական հաշվառում», «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում», և «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մասնագիտությունները

խիստ պահանջված են: «Մեր քաղաքում կան բեռնափոխադրում կատարող շատ ընկերություններ, որտեղ աշխատում են մեր ուսանողները: Ի դեպ, սպասարկման ոլորտը հաշվապահների կարիք ունի, և մեր շրջանավարտներն աշխատում են քաղաքի բոլոր մեծ սուպերմարկետներում, իսկ «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» ավարտածները՝ տարածաշրջանի մանկապարտեզներում և մարզադպրոցներում: Վերջին տարիներին մեզ մոտ գործում է նաև ՏՏ ոլորտի նորարարական մասնագիտություն՝ «Հաշվապահական տեխնիկա և ավտոմատացված համակարգերի ծրագրերի ապահովում», որը նոր շունչ է տվել քոլեջին: Իհարկե, այս ամենի հետ մեկտեղ քոլեջն ունի դասավանդող մասնագետների խնդիր, քանի որ վերջինս բարձր վճարվող մասնագիտություն է», - շեշտում է Աննան Դուլիջոյանը՝ հավելելով, որ ուսուցանվող մյուս մասնագիտություններն են՝ «Իրավագիտություն», «Դիզայն», «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա», «Նախադպրոցական կրթություն»:

«Թեև մեր տարածաշրջանում առավել զարգացած է գյուղատնտեսությունը, սակայն ժամանակ առ ժամանակ աշխատաշուկայում նոր մասնագիտություններ են պահանջարկ ունենում: Երբ 3-4 տարի առաջ Արթիկում բացվեց տեքստիլ արտադրության գործարան, և մենք դրան զուգահեռ՝ տեքստիլ արտադրության տեխնիկ մասնագիտությունը ներմուծեցինք քոլեջ: Չափազանց կարևոր էր նյութատեխնիկական բազան, որը քոլեջը, ցավոք, չուներ: Եվ ահա, ԿԳՄՍ նախարարության առաջարկով փորձեցինք նորարարություն մտցնել քոլեջում՝ իրականացնելով մի շարք կարճաժամկետ ծրագրեր: Հրավիրեցինք Արթիկում գործող արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտի ամենախոշոր բիզնեսի՝ կարի արտադրությամբ զբաղվող «Չեխարմինկեստ» գործարանի, ձեռնոցներ արտադրող «Վոլյում գրուպի» և ջերմոցային տնտեսության ներկայացուցիչներին: ԿԳՄՍ նախարարության աշխատակիցները գործարարների հետ համագործակցությամբ փորձեցին հասկանալ, թե ինչպիսի նոր մասնագիտություններ կարե-

լի է ներդնել քոլեջում, որպեսզի եւ քոլեջի համար լավ լինի, եւ քաղաքի, եւ գործատուների: Այդ ընթացքում մեզ այցելել էին նաև «Մարդը կարիքի մեջ» միջազգային կազմակերպության ներկայացուցիչները, և այդ զրույցի արդյունքում որոշում կայացվեց իրականացնել 3 կարճաժամկետ ծրագրեր՝ ջերմոցային տնտեսության ագրոնոմ (5 ամիս), դերձակ և տեքստիլ արտադրության տեխնիկ (3 ամիս), - մեզ հետ զրույցում մանրամասնում է քոլեջի տնօրենը:

Նրա խոսքով՝ «Մարդը կարիքի մեջ» կազմակերպությունն իրականացրել է նաև վերապատրաստման դասընթացներ գործատուների ներկայացուցիչների հետ՝ նրանց փոխանցելով սովորեցնելու և որպես մանկավարժ հանդես գալու հմտություններ: Աննան Դուլիջոյանը վստահեցնում է՝ կազմակերպությունը մեծ աջակցություն է ցուցաբերել այդ գործում, և առանց դրա՝ քոլեջը չէր կարողանա իրականացնել այդ ծրագրերը: Մասնավորապես, կազմակերպությունը տրամադրել է 9 կարի մեքենա, ձեռավորել կարի լաբորատորիա, որպեսզի գործնական պարապմունքներն այդտեղ կատարեն ուսանողները, իսկ պրակտիկան անցնեն գործարանում: Ջերմատնային տնտեսության հետ կապված գործատուի պահանջով լսարանը ձեռավորել է քոլեջը, իսկ «Մարդը կարիքի մեջ» կազմակերպությունը տրամադրել է սարքավորումներ: Տեքստիլ արտադրության պարագայում սարքավորումները տրամադրել է գործատունը:

«Այս մասնագիտությունների պարագայում, ըստ ծրագրի, դասերը հավասար բաժանվել են 1.5 ամիսը քոլեջում, 1.5-ը՝ գործարանում: Մենք կազմակերպեցինք այդ կարճաժամկետ ծրագրերը և հետագայում դրանք հիմք ունենալով ու նաև ժամանակի պահանջից ելնելով՝ կարի արտադրության մեջ ԱՅՈՒ ձևաչափով ներդրեցինք երկարաժամկետ ծրագիր: Նշեն, որ այն իրականություն դարձավ ՄԱՌՆ-ի հետ բավականին երկար աշխատելու արդյունքում: Այս ծրագրում քոլեջը եւս ներդրումներ արեց, և ներկայում ունենք կարի արտադրու-

թյան ձեռավորված և հագեցած երկու լսարաններ, որոնք լիարժեք բավարարում են արդի պահանջներին», - փաստում է Աննան Դուլիջոյանը:

Քոլեջի տնօրենի խոսքով՝ երկրորդ անգամ, սակայն, չի հաջողվել կազմակերպել կարճաժամկետ ծրագիրը՝ ֆինանսական խնդիրների պատճառով: «Առաջին դասընթացի ամբողջ ծրագիրը ֆինանսավորել է «Մարդը կարիքի մեջ» կազմակերպությունը՝ լսարանների ձեռավորում, դասախոսների աշխատավարձ, 10 հազար դրամ կրթաթոշակ ուսանողներին և այլն, հետևաբար մենք հեշտությամբ կարողացել էինք խումբը ձեռավորվել: Երկրորդ անգամ դա, ցավոք, չստացվեց, քանի որ եռամսյա դասընթացի կազմակերպումը բավականին մեծ գումար է կազմում, որն արդեն պետք է ուսանողը վճարեր: Իսկ դա անհրատեսական էր՝ առանց գործատուի կամ այլ կազմակերպությունների աջակցության, քանի որ քոլեջի վճարովի համակարգի տեղերն անգամ դժվարությամբ ենք կարողանում համայնել», - ցավով նկատում է մեր զրուցակիցը՝ միաժամանակ պնդելով, որ այդ ամենը, սակայն, ունեցել է նաև իր դրական արդյունքը:

Նրա խոսքով՝ երկարաժամկետ ծրագրի շնորհիվ, որը պետության հոգածության ներքո է, նույնիսկ մրցակցություն է գնում այդ բաժնի համար, քանի որ հիանալի ձեռավորված լսարանները շատ են գրավում դիմորդներին: «Այդ հաջող համագործակցության արդյունքում մենք նաև նոր գործընկերներ ձեռք բերեցինք: «Դեպի Հայք» կազմակերպությունը, լսելով մեր կազմակերպված թիմի և հաջողությունների մասին, անցյալ տարի երեք լսարան վերանորոգեց: Այս տարի եւս երեք լսարան ու մեծ դահլիճը վերանորոգեցին, որը մեծ ներդրում էր ուսհաստատության համար: Վերջին վերանորոգումը քոլեջում եղել էր 1980 թվականին: Այս տարի երկու հրաշալի լսարանի համար ամբողջական գույք ենք ձեռք բերել», - մեզ հետ զրույցում ասում է Աննան Դուլիջոյանը:

Նա վստահեցնում է՝ կարճաժամկետ ծրագրերը նորություն էին Արթիկի տարածաշրջանում և

չափազանց կարևոր քոլեջի համար: Ըստ մեր զրուցակցի՝ այդ ծրագրերի շնորհիվ է նաև, որ քոլեջն ունի 400 ուսանող: Նախկինում երբեք այդքան ուսանող ուսհաստատությունը չի ունեցել:

Անդրադառնալով գործընկերների հետ համագործակցությանը՝ Աննան Դուլիջոյանը նշում է, որ այս ընթացքում աշխատել են տեղական և միջազգային մի շարք կազմակերպությունների հետ՝ «Խաչմերուկ», «Դեպի Հայք», «Նվիրիր արեւ», «Կարիտաս», «Գրին ֆուդ», «Չեխ արմինկեստ», «Վոլյում գրուպ» և այլն, որի արդյունքում համալրվել է քոլեջի նյութատեխնիկական բազան: Շատ ծրագրեր իրականացվել են կամավորների միջոցով, իսկ «Մարդը կարիքի մեջ» կազմակերպությունն աջակցել է նաև քոլեջի կայքի ստեղծման աշխատանքներին:

«Հաշվի առնելով մեր գործատուների շրջանավարտների մասնագիտական հմտությունների հետ կապված պահանջը, քոլեջում կրթական նոր ծրագրեր են իրականացվում, օրինակ՝ հաշվապահ մասնագիտությունը: Այդ մասնագիտության մեջ ներմուծել ենք 7Ց հաշվապահական ծրագիրը, քանի որ մեր ծրագրերը չեն բավարարում գործատուի պահանջին: «Նախադպրոցական կրթությունն մասնագիտությունը եւս նոր շունչ ստացավ, և վերաբացվեց բաժինը՝ ելնելով աշխատաշուկայի պահանջարկից», - նշում է մեր զրուցակիցը՝ հավելելով, որ քոլեջի գործունեությունն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով կառավարման խորհրդի կազմում ընդգրկված են գործատուներ, մասնավոր հատվածի գործարարներ:

Աննան Դուլիջոյանն ասում է, որ ժամանակի զարգացումներին և մարտահրավերներին դիմակայելու համար քոլեջում մշտապես վերապատրաստումներ են իրականացվում: Մասնավորապես՝ ՄԱՌՆԱԿ-ի հետ իրականացվել են մոդուլային ուսուցման հետ կապված վերապատրաստումներ, «Ինթրա» հոգեբանական կետրոնի հետ ուղղված ներառական կրթության ներդրման գործընթացին:

Դեղին ԳՈՎԱՆՆԻՍԱՆ



Բաժանորդագրվի՛ր, կարդա՛ «Կրթություն»

Օվկիանոսից այն կողմ՝ հեռավոր Ամերիկայում, օվկիանոսից այս կողմ՝ Եվրոպայում, հյուսիսում՝ Ռուսաստանում, հարավում՝ արաբական երկրներում, Ավստրալիայում, թե ամենուր, յուրաքանչյուր քաղաքացի ունի իր թերթը՝ մանավանդ, եթե այն մասնագիտական է եւ ուղղված է հենց իրեն... Հայաստանում, սիրելի Ընթերցող, այդ թերթը քեզ համար «Կրթություն»-ն է՝ մեզանում պահպանված թերեւս միակ մասնագիտական թերթը, 1932 թվականից ի վեր («Կուլտուրական ֆրոնտ», «Սովետական դպրոց», «Դպրություն», «Դպրոց», 1997-ից՝ «Կրթություն» անվանումով):

Գիտե՞ս, սիրելի Ընթերցող, շատ դժվար է լինել մասնագիտական պարբերական ու միաժամանակ մնալ հանրամատչելի, հետաքրքիր լինել եւ ուսուցչի, մանկավարժի, եւ նաեւ ուսանողի, ծնողի, բոլորի համար: Դա դեռ ոչինչ. արհեստավարժ եղար՝ այդ խնդիրը կլուծես: Բայց այսօր, եթե որեւէ կուսակցության, որեւէ քաղաքական կամ գործարար խմբի խոսափողը չես ու չունես այդպիսիք՝ իբրեւ հովանավոր, պիտի լուծես նաեւ տնտեսական խնդիր: Օրաթերթ չես, հրատապ լրատվություն չես հրապարակելու, «դեղին» մամուլին հետեւելով՝ ընթերցողներ որսալու սկզբունքը խորթ է քեզ համար, որովհետեւ հայոց հազարամյա դպրության ու այսօրվա դպրոցի քարոզիչն ես, ու խոսքդ պիտի լինի լուսավոր, անքե՛ն, դրականը դրվատող ու հասարակություն կրթող... ոչ թե նրան զավեշտով, հերյուրանքով գայթակղող:

Սիրելի Ընթերցող, ինչ նախասիրություններ էլ որ ունենաս, համոզված եղիր, «Կրթությունը» անարա՛տ հոգեւոր սնունդ է տալու Քեզ, եւ ոչ միայն մանկավարժական թեմաներով: Իսկ եթե ուզում ես, որ մեր հանդիպումները լինեն շարունակական եւ գոյատեւի Քո՛ թերթը՝ մի օր լավ, մի օր գերազանց, մի օր էլ պակաս կամ թերի, բայց Քո՛ թերթը, որ ամեն չորեքշաբթի հայտնվում է Քո՛ ձեռքերում, եւ որի ճակատագիրը դարձյալ Քո՛ ձեռքերում է ուղղակիորեն, բաժանորդագրվի՛ր, կարդա՛... Սիրի՛ր Քո թերթը, որ այն օրավոր դառնա ավելի հետաքրքիր, փոխանցի՛ր այն Քո հարեւանին, բարեկամին, ընկերոջը, հորդորի՛ր, որ կարդա... Մեզ սնուցողը Դու ես՝ եւ բարոյապետ, եւ նյութապետ: Քո՛ բաժանորդագրությամբ, կրպակներից Քո՛ գնումներով, անհրաժեշտ տպաքանակ ապահովելով՝ Դու հնարավորություն կտաս, որ «Կրթությունը» գոյատեւի, դառնա փնտրված ու սիրված թերթ... Բաժանորդագրվի՛ր, գնի՛ր, կարդա՛ «Կրթություն», միշտ ունեցի՛ր Քո թերթը...

«Կրթություն» կարելի է բաժանորդագրվել «Հայփոստի» եւ «Հայմամուլի» բոլոր տարածքային մասնաճյուղերում, բաժանորդագրություն կազմակերպող այլ գործակալություններում:

Մեկ տարվա բաժանորդագրության համար պետք է վճարել 10400 դրամ եւ ստանալ բոլոր 52 համարները:

Վեց ամսվա բաժանորդագրական գինը 5200 դրամ է (26 համարի համար):

Երեք ամիսների բաժանորդագրության համար պետք է վճարել 2600 դրամ (համապատասխանաբար կստանաք 13 համար):

Այլ մանրամասնությունների համար կարող եք դիմել «Հայփոստի» (51-45-47), «Հայմամուլի» (45-82-00) եւ այլ գործակալությունների այն մասնաճյուղերին, որտեղ կատարում եք բաժանորդագրությունը:



Շաբաթաթերթ «Кртутун» (education) weekly «Кртутун» (образование) еженедельник 12.10.2000

Մայրաքաղաք

Բիայնիլի-Վան, Երեւոնի-Երեւան... Քանի՞ դար կա այս անցումների միջեւ... Նախիջեւան-Երեւան-Իջեւան... Ե՛րբ է Նոյն անցել այս ուղերթով...



«Кртутун» еженедельник 05.10.2005թ. չորեքշաբթի թիվ 28 (175)



«Кртутун» еженедельник 18.08.2005թ. հինգշաբթի թիվ 21 (176)



ՀԻՄՆԱԳԻՐ՝
ՀՀ ԿԳՄՍՆ
«Կրթություն» թերթի
խմբագրություն» ՓԲԸ

Գրանցման վկայական՝ 01Ս-049349,
Տրված է՝ 11.01.2001թ.
Դասիչ՝ 69312,
Հասցեն՝ ՏԻԳՐԱՆ Մեծի 67,
E-mail: krtutun@yandex.ru
Հեռ. (043) 57 49 56, (043) 57 49 51

Խմբագրությունը ստացված թղթակցությունները եւ նամակները չի գրախոսում եւ ետ չի վերադարձնում: Չպատվիրված հոդվածների համար հոնորար չի վճարվում:
Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
Հղումը պարտադիր է:

Տպագրված է «ՏԻԳՐԱՆ Մեծ»
հրատարակչության տպարանում:
Տպաքանակը՝ 2000:
Ծավալը՝ 4 տպագրական մամուլ:
Ստորագրված է տպագրության՝
06.12.2022թ.
Գինը՝ 200 դրամ:

Համարի պատասխանատու՝
Գլխավոր խմբագիր՝
Գագիկ ՄԻՆԱՍՅԱՆ